Azg
Ազգ
15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997, ՇՈՐԵՔՇԱԲԹԻ #197 (1451)

Այսօր կորուսվի Վիկտոր Չեռնոմիրդինի, գուցե նաեւ Դումայի բախտը

14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, VOA, DW: Ռուսաստանի Պետդումայի խորհուրդը չորեքշաբթի օրվա նիստի օրակարգ մտցրեց կառավարությանն անվստահության քվե տալու հարցը: Իսկ խորհրդի որոշումից հետո Պետդումայի խոսնակ Գենադի Սելեզնյովը հայտնեց, որ իր հետ հանդիպման ժամանակ վարչապետ Չեռնոմիրդինը երեկ հայտարարել էր, թե կաբինետին անվստահության քվե հայտնելու դեպքում հրաժարական կներկայացնի: Կառավարությանն անվստահության քվե հայտնելու նախաձեռնողը կոմունիստների առաջնորդ Գենադի Զյուգանովն է: Այդ նախաձեռնության կողմնակիցն է «Յաբլոկո» պատգամավորական խումբը: Պետդումայի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Ռիժկովը կարծում է, որ կաբինետի համար անբարենպաստ քվեարկության դեպքում վարչապետ Չեռնոմիրդինը միանգամից հրաժարական կտա եւ չի բացառվում, որ նա դա կանի հենց Պետդումայում եւ, ըստ Վլադիմիր Ռիժկովի, Բորիս Ելցինը չի սպասի 3 ամիս եւ պատգամավորների կրկնական քվեարկությանը, այլ հենց նույն օրն իսկ կընդունի վարչապետի հրաժարականը:

Եվ հենց հաջորդ օրն իսկ Ռուսաստանի նախագահը Պետդումային կներկայացնի պատգամավորների համար անընդունելի նոր վարչապետի թեկնածություն, որի չհաստատման դեպքում Բորիս Ելցինը կցրի Պետդուման:

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքում դրված քարը մնայուն է

Երեւանում բացվեց Թեհրանի կենտրոնը

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Այս օրերին սփյուռքի տարբեր գաղթօջախներից Երեւան ժամանած ԹՄՄ, ՈԱԿ «վերին էշելոնների» ներկայացուցիչներ Հայաստանի իրենց գործընկերների, հայ հասարակայնության լայն խավերի հետ նշում են ԹՄՄ 50-ամյա հոբելյանը, եւ հոբելյանական հանդիսությունների «մեխը», թերեւս, Թեհրանի կենտրոնի բացումն էր, որ տեղի ունեցավ երեկ Երեւանի Օղակաձեւ զբոսայգում: Այստեղ, նախկին «Կռունկ» սրճարանի տեղում, սփյուռքահայ բեհրանական շրջանակների, բարեւարների դրամական հատկացումների շնորհիվ այսօր հառնում է տեղանքին համահունչ, լուսավոր մի շինություն, ուր այսուհետ կհանգրվանի Թեհրան մշակութային միությունը՝ հայրենանպաստ ծրագրերով եւ մշակութային նախաձեռնություններով:

Կենտրոնի հանդիսավոր բացմանը ներկա էին պետական բարձրաստիճան այրեր (ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյան, կրթության եւ գիտության նախարար Արտաշես Պետրոսյան, սոցաշ նախարար Հրանուշ Հակոբյան եւ ուրիշներ), Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, այդ թվում՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Հունաստանի, Չինաստանի, Իրանի դեսպանները, հայ մշակույթի նշանավոր գործիչներ, հաղթական գործիչներ, Աժ պատգամավորներ, բազմաթիվ լրագրողներ, հասարակայնության այլ ներկայացուցիչներ, Հայաստան ժամանած ավելի քան 100 թեհրանցիներ:

Կենտրոնի ստեղծման գաղափարը ծնվել է 1991 թ. հուլիսին, երբ Լոնդոնի Թեհրան Թրաստ կազմակերպությունը «Ազգ» հաստատության միջոցով սկսեց ֆինանսավորել շենքի գնումը: 1994-ի հոկտեմբերից Թեհրան Թրաստը որոշեց սեփականություն ձեռք բերեց շենքը եւ հարակից հողատեղերը, ու «Կռունկ» սրճարանի վերականգնմանը զուգահեռ բարձրացան շենքի բեւային կառույցները՝ ծնունդ տալով մի տպավորիչ հանդիսության, որպես բացառապես արտահանման ներդրումների արդյունք, բահույթ չհետաքրքրող «Թեհրան կենտրոն» ՍՊԸ-ի սեփականություն:

Թեհրան Թրաստի նախաձեռնության գլխավոր խորհրդատուն Հայկաշեն Ուզունյանն էր, գլխավոր ֆինանսավորողները՝ ԹՄՄ հիմնադիր անդամ, հանգուցյալ պրոֆեսոր Բարունակ Թովմասյանի այրին՝ Անժել Թովմասյանը Բոստոնից, Սեւան եւ Կարո Գրիգորյանները, Վարդան եւ Ռոզեթ Ուզունյանները Լոնդոնից, եւ հանդիսությունն ավելի գեղեցիկ դարձնելու համար նրանց անունը կրող մասնաշենքերի բացումով:

Տես # էջ 2



ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի այցը Մոսկվա

«Էխո Մոսկվի» ռադիոկայանով երկուշաբթի օրը հեռարձակված ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հարցազրույցը տարբեր լրատվամիջոցներ տարբեր կերպ են ներկայացրել՝ վերագրելով ղրն Ղուկասյանին նույնիսկ այն արտահայտությունը, թե Լեռնային Ղարաբաղը պատրաստ է մնալ Ադրբեջանի կազմում: «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության Մոսկվայի թղթակցի վկայությամբ՝ ԼՂՀ նախագահը նման հայտարարություններ չի արել: Այդ արտահայտությունը հերքում է նաեւ ԼՂՀ նախագահի մամլո ծառայությունը:

14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Արկադի Ղուկասյանը շարունակում է իր աշխատանքային այցը Մոսկվա: Մոսկվայում ԼՂՀ-ի ներկայացուցչությունը հաղորդեց, որ նախատեսված չէ Արկադի Ղուկասյանի հանդիպումը Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովի հետ: Եվ ընդհանրապես, Ռուսաստանի ԱԳՆ-ն այս այցելությունն ընկալում է որպես մասնավոր այցելություն եւ որեւէ կերպ չի զնահատում կամ մեկնաբանում Արկադի Ղուկասյանի մոսկովյան հանդիպումները, որն իր այցի առաջին երկու օրվա ընթացքում հանդիպել է Պետդումայի ղեկավարության, ինչպես նաեւ բոլոր խմբակցությունների առաջնորդների հետ: Այցը ենթադրաբար կավարտվի ուրբաթ օրը: Հանդիպումների ընթացքում գլխավորապես քննարկվում են ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող հարցեր: Երկուշաբթի երեկոյան ԼՂՀ նախագահը ելույթ ունեցավ «Էխո Մոսկվի» ռադիոկայանի ուղիղ եթերում: ԼՂՀ նախագահը, ինչպես եւ նախկինում, գտնում է, որ Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի միջեւ հաստատված զինադադարը պետք է վավերացվի: Ընդսմին, նա պարտադիր է համարում, որ կնքվելիք փաստաթղթի վրա լինեն Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ստորագրությունները: Մեկնաբանելով ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի խմբի համանախագահների այն տեսակետը, համաձայն որի Լեռնային Ղարաբաղին առնչվող իրադարձությունները Ադրբեջանի ներքին գործն են, նախագահ Ղուկասյանը հայտնեց. «Մենք ելնում ենք այն բանից, որ կողմերից յուրաքանչյուրը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր շահերը: Նպատակին հասնելը պարտադիր չէ, սակայն ոչ ոք իրավունք չունի սահմանափակելու կողմերին իրենց դիրքերի պաշտպանության ձեւերի ընտրության գործում: Իսկ եթե Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի ներքին գործն է, ապա հասկանալի չէ, թե ինչը պիտի հանդիսանա քննարկման առարկա»:

Տես # էջ 2

Առկախվել է 60 մլն դոլարի օժանդակությունը Թուրքիային

Թուրքական «Անատոլու» լրատվական գործակալության համաձայն, Եվրախորհրդարանի բյուջեի հանձնախումբը առկախել է Մախսային միության շրջանակներում Թուրքիային հատկացվելիք մոտ 60 մլն դոլար օգնությունը: Ըստ դիվանագիտական աղբյուրների, հանձնախումբն այս որոշումը կայացրել է Եվրամիության խորհրդարանի այն բանաձեւերի հիման վրա, որոնք Թուրքիայից պահանջում են հարգել մարդու իրավունքները, Եվրամիության սահմանները, ինչպես նաեւ գործնական քայլեր կատարել Կիպրոսի հարցի լուծման համար:

«ԵՐԵՎԱՆ»

Փարիզում հանդիպեցին Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Ժակ Շիրակը

14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Այսօր Փարիզում տեղի ունեցավ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ: Զրույցից եւ ճաշից հետո նախագահները դուրս եկան Ելիսեյան պալատի բակ: Լրագրողներին նրանք ասացին մի քանի խոսք: Առաջինն արտահայտվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: «Մենք շատ լուրջ հարցեր քննարկեցինք: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի խնդիրը, որովհետեւ Ֆրանսիան արդեն շատ ակտիվորեն ներգրավվել է այս պրոցեսում որպես համանախագահ եւ մենք վստահ ենք, որ Ֆրանսիան իր զգալի նպաստը կբերի մեր տարածաշրջանում խաղաղության վերականգնման գործին: Բացի այդ, մենք շատ լրջորեն քննարկեցինք երկկողմանի հարաբերությունների վիճակը: Պետք է գոհունակությամբ նշեմ, որ Ֆրանսիայի կառավարությունը Հայաստանը դիտում է իր առաջնահերթությունների շարքում»:

Ժակ Շիրակն ասաց. «Մենք խոսեցինք մեր երկկողմանի հարաբերությունների մասին, որոնք բարենպաստ են եւ մտադիր ենք զարգացնել դրանք որքան հաղթական մակարդակով, նույնքան էլ՝ տնտեսական եւ մշակութային: Մենք խոսեցինք երկարորեն նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին: Անիք էինք ունեցել Ստրասբուրգում այդ մասին օրերս խոսելու նախագահներ Ելցինի եւ Ալիեւի հետ նույնպես եւ ես տեսա, որ յուրաքանչյուրը ցանկանում է ամեն ինչ անել՝ հասնելու բոլորի համար ընդունելի պայմաններ ստեղծելուն: Ստեղծելու մի լուծում, որը յուրաքանչյուր կողմին եւ, մանավանդ, Ղարաբաղի բնակիչներին կբերի անվտանգություն եւ որը հնարավոր կդարձնի տնտեսական զարգացումը շրջանում: Այս տարբեր խոսակցություններից հետո ես մի փոքր ավելի լավատես եմ եւ մեր ռուս եւ ամերիկացի բարեկամների հետ, ամեն ինչ անելու ենք դյուրացնելու այդ խնդրի լուծումը»:

Հարց եղավ նաեւ Յունեսկոյի կողմից Օսմանյան կայսրության 700-ամյակի տոնակատարության մասին: Ֆրանսիայի նախագահն ասաց. «Ես ցանկանում եմ, որ Անիի ավերակները գրանցվեն մարդկային, համաշխարհային մշակույթի ժառանգության մեջ, որովհետեւ Անիի վիճակն այսօր այնպիսին է, որ եթե ոչինչ չարվի, ապա շատ լրջորեն եւ արագորեն կվնասվի»: Ժակ Շիրակն այնուհետեւ շեշտեց հետեւյալը. «Թուրքիան կարող է նշանավորել ինչ ուզում է: Խնդիրն իմանալն է, թե Յունեսկոն ինչ է մտադիր անել: Անձամբ ես նպատակահարմար դիտեմ չունեմ այդպիսի նշանավորումների նկատմամբ եւ այդպես էլ ասացի Հայաստանի նախագահին, որն ինձ հարց տվեց այդ մասին: Պետք է զգույշ լինել նման հարցերում»: Վերջին հարցը վերաբերում էր Ղարաբաղի կարգավորման խնդրի շուրջ Մոսկվայի ժողովին: Շիրակն ասաց, որ այդ ժողովը կլինի ոչ թե խառակողմ, այլ Մ. Նախանգների մասնակցությամբ եւ ավելացրեց. «Մենք մաղթում ենք, որ այդ ժողովը տեղի ունենա, որովհետեւ դա կնշանակի, որ մի լուրջ եւ վճռական քայլ է արվել խաղաղության ուղղությամբ»:

1995-1996

ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակը Տրաչյա Հովհաննիսյանին, Կիմ Բակչիին, Ասատուր Մնացականյանին եւ Սերգեյ Վարդանյանին

Թեհրան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակի դասակազմը (Հայկաշեն Ուզունյան, Երվանդ Ազատյան, Լեւոն Հախվերդյան, Հարություն Կարապետյան եւ Հակոբ Ավետիսյան) որոշել է 1995 եւ 1996 տարիների մրցանակը շնորհել Հրաչյա Հովհաննիսյանին, Կիմ Բակչիին, Ասատուր Մնացականյանին (հետմահու) եւ Սերգեյ Վարդանյանին, հաջորդաբար՝ «Կապույտ լեռան շուրը», «Սուրբ Ղազարի հարությունը», «Հայրեններ» եւ «Հայաստանի մայրաքաղաքները» գրքերի, ինչպես նաեւ նրանց վաստակի համար:

Հիշեցնենք, որ ԹՄՄ «Հ. Ուզունյան» մրցանակը հիմնվել է 1970 թ.-ին, Բեյրութում, ԹՄՄ-ի հիմնադիր անդամ Հայկաշեն Ուզունյանի կողմից եւ ամեն տարի տրվում է նախորդ տարվա ընթացքում ներկայացված հրատարակված գրքերից լավագույն գրական ստեղծագործություններին, գրականագիտական ու բանասիրական գործերին: Ցարդ այդ մրցանակին են արժանացել Զարեհ Որբունին, Վահե Վահյանը, Գեւորգ Ահարոնյանը, Անդրանիկ Անդրեասյանը, Արամ Հայկազը, Վահե Հայկը, Շահան Շահնուրը, Սուրեն Իշխանը, Գալուստ Խանենցը, Հակոբ Կարապենցը, Անդրանիկ Ծառուկյանը, Զահրատը, Գրիգոր Պըլտյանը, Վահանուշ Թեքյանը, Իգնա Սարգսյանը, Ավետիս Սանճյանը, Զարեհ Խրախունին, Ստեփան Ալաջաջյանը, Արտեմ Հարությունյանը եւ ուրիշներ:

Մրցանակի հիմնադիրն ու ֆինանսավորողը որոշել էր վերոհիշյալ տարիների համար մրցանակները հատկացնել Հայաստանում լույս տեսած գրքերին, փաստորեն, այդպիսով, մինչեւ վերջերս միայն սփյուռքում լույս տեսած ստեղծագործություններին հատկացվող մրցանակին տալով համահայկական տարողություն:

Երեկ Թեհրան նորաբաց կենտրոնում մրցանակակիրներին տրվեցին պարգեւներ: Ավելի մանրամասն վաղվա համարում:

ԱԶԳ

տեղական

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

«Հայրենիքում դրված քարը մնայուն է»

Սկիզբը էջ 1

Կենտրոնի կարեւոր մասն են Ժիրայր Թպչյան անունը կրող գրադարանային բաժինը, Լուիզա Գազանճյան սրահը, որի կառուցումն իրականացվել է Ս. Նահանգների եւ Կանադայի ԹՄՄ Կենտրոնական վարչության ներդրումների շնորհիվ հանգուցյալ բարեբարուհի Լուիզա Գազանճյանի կտակից: Սրահի բացումը կատարեցին Երվանդ Ազատյանը եւ Օշին Քեշիշյանը: Կենտրոնը համալրված է նաեւ ցուցասրահով, որի բացման պատիվը վիճակվեց հանգուցյալ բարեբար Արամ Խաչատրյանի այրուն՝ Գոհար Խաչատրյանին. այստեղ մեր հասարակայնությանը ներկայացան հայ ժամանակակից կերպարվեստի 11 վարպետներ:

Կենտրոնի գլխավոր մուտքի երկնագույն ժապավենը «թեթեւ ձեռով» կտրեց Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը՝ տիկին Անժել Թովմասյանի «օգնությամբ» (տիկին Թովմասյանը փոխարինում էր հիվանդության պատճառով հանդիսությանը չժամանած ԹՄՄ նախագահ Հայկազն Ուզունյանին)՝ նշանավորելով այս հիրավի հոյակերտ կառույցի նորամուտը մայրաքաղաք: Այնուհետեւ տանտերերի (թեթեյանցիների) եւ հյուրերի հոսքն ուղղվեց Մեծ դահլիճ, ուր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի ղեկավարությամբ տեղի ունեցած օրհնության արարողությամբ սկսվեց բուն հանդիսությունը:

«Դարի կառույցի» (ինչպես սիրում են ասել մեր գործընկերները) բացման առթիվ ներկաներին ողջունեց «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը հույս հայտնելով, որ նորաստեղծ կենտրոնը կծառայի հայ մշակույթին եւ հայ լրագրությանը, եւ տեղեկացրեց, որ պրն Սիրադեղյանը, որ, «իր նախորդների նման, լավ հարաբերությունների մեջ է թեթեյանցիների հետ», կենտրոնին հարող կանգառը բարեկարգելու հրաման է ստորագրել նախորդ երեկոյան:

Քաղաքապետը, շնորհավորեց բոլոր ներկաներին, հատկապես «Ազգ»-ի խմբագրակազմին, որը «վերջապես նստելու տեղ ունի», ինչի իրավունքը նվաճել է լրագրության մեջ նոր հայացք ներմուծելով: Միաժամանակ պրն Սիրադեղյանը մաղթեց, որ այս կառույցը սփյուռքի մեր հայրենակիցների ներդրումներով կառուցված վերջին շինությունը չլինի Հայաստանում, քանզի «Երեւանը կառուցելը միայն երեւանցիների գործը չէ»:

Շարունակելով ողջույնների շարքը, բարեբարուհի Սեւան Գրիգորյանն անդրադարձավ ԹՄՄ լոնդոնյան մասնաճյուղի, հետագայում՝ Թեթեյան Թրասքի հիմնադրմանը եւ գործունեությանը՝ իր ամուսնու, լուսահոգի պրն Գրիգորյանի գլխավորությամբ, եւ գոհունակություն հայտնեց, որ Թեթեյան կենտրոն ունենալու ծրագիրը, որ ֆինանսական դժվարությունների պատճառով հնարավոր չեղավ իրագործել Լոնդոնում, կարելի դարձավ կյանքի կոչել «հայրենիքի հարազատ ու քաղցր հողին վրա»: Տիկին Գրիգորյանն իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նվիրատուներին, հատկապես նշելով Անժել Թովմասյանին, Գազանճյան ֆոնդին, Լուսի Պարսամյանին եւ Գոհար Խաչատուրյանին, Հայկազն Ուզունյանին, որ քաջալերեց կառույցի ծրագիրը, Վարդան Ուզունյանին, որ «իր ուսերուն վրա առավ շենքի շինարարության ընթացքի ծանր պարականությունը զոհելով իր հանգիստը, ժամանակը, մոտեն հետաքրքրեց եւ հետեւեցավ այդ դժվարին գործը գլուխ բերելուն», ԹՄՄ պատասխանատու մարմնին:

Վարդան Ուզունյանը, որն, ինչպես նշեց Հակոբ Ավետիսյանը, «վերջին երկու ամիսը միշտ էր մնում վրձինը ձեռին ինքը ներկեր պատերը, այն, ինչը չէր հավանում», կարեւորեց «աշխարհատարած ԹՄՄ մեծ ընտանիքին երազների իրականացումն այս կենտրոնի շինարարությամբ» ի ներդրումն ազատ ու անկախ Հայաստանի կայուն առաջացման, հզորացման, ի հիշատակ մեծ բանաստեղծի: Պրն Ուզունյանը մեկ առ մեկ նշեց բոլոր այն մարդկանց ու կազմակերպությունների անունները, որոնք ֆինանսավորեցին կառույցի շինարարությունը, այդ թվում՝ էդի եւ Թալին Ավագյաններ, ԹՄՄ Լոնդոնի, Դեթրոյտի, Ֆիլադելֆիայի, Չիկագոյի եւ Տորոնտոյի մասնաճյուղեր (այդ անունները գրանցված են ցուցասախտակի «հիշողության» մեջ)՝ չմոռանալով նաեւ շինարարական աշխատանքների անմիջական իրագործումների, մասնավորապես կառույցի հեղինակ, ճարտարապետ Օլեգ Շոգորեւին, աշխատակազմի ղեկավար Սարգիս Սարգսյանին, Հենրիկ Հարությունյանին, Լեւոն Թադեւոսյանին, «որոնք գիշերը ցերեկին խառնելով եւ երբեմն մոռանալով, որ ընտանիքներ ունին, իրագործեցին այս հոյակերտ կենտրոնը»: Նա արժանին մատուցեց նաեւ սեփական ընտանիքի անդամներին, որոնք տարիներ շարունակ «համբերությամբ ընդունեցին իր բազմաթիվ բացակայությունները, որոնք երբեմն հարատեւ ու դժվար եղան»:

Հեռակա կարգով ներկաներին փոխանցվեց Անժել Թովմասյանի խոսքը. «Հայրենիքին մեջ մի քար դնելն ավելի մնայուն է, քան սփյուռքի մեջ շենքեր կառուցելը»:

Երվանդ Ազատյանը, ԱՄՆ եւ Կանադայի ԹՄՄ շրջանակների կողմից, իր ուրախությունը հայտնեց ԹՄՄ աշխարհասփյուռ շրջանակների անդամներին, այստեղ, այս կոթողի բացման առիթով համախմբված տեսնելու համար ափսոսանք հայտնելով, որ մեզ հետ չէ ՀԹՄՄ հանգուցյալ նախագահ Ֆրունզիկ Դավլաթյանը:

Վերջապես ներկաներին շնորհավորեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն՝ ողջունելով մայրաքաղաքի հոգեւոր, մշակութային կյանքի ապագա հիշած օջախի ստեղծումը, որի «հեղինակը Թեթեյան բանաստեղծի անունով կնքված միությունն է» «բարձրորեն գնահատելով» միության «ամբողջական աջակցությունը Հայաստանին եւ հոգեւոր կենտրոնին», իբրեւ սփյուռքի բոլոր ուժերի համախմբման դրսեւորում՝ օրվա հրամայականին համահունչ: Նշելով, որ մշակույթը Հայաստանում, ցավոք, նահանջում է, Վեհափառը հույս հայտնեց, որ Թեթեյան կենտրոնը կնպաստի հայ մշակույթի զարգացմանը, որ վերջին հաշվով հոգու գերիշխանության միակ երաշխավորն է:

Ավելացնենք, որ, քաղաքապետի հրամանի համաձայն, Օղակաձեւ զբոսայգու Թեթեյան կենտրոնից մինչեւ Վ. Մամիկոնյան արձանի տարածքն այսուհետ կկոչվի Թեթեյան պուրակ, իսկ հետագայում, ինչպես տեղեկացրեց «Ազգ»-ի գլխավոր խմբագիրը, քաղաքի այդ հատվածը կվերածվի կրթամշակութային կենտրոնի:

ԵՐԵՎԱՆ

Բոբ Դոուլ. Ցեղասպանությունը պատմական փաստ է եւ պետք է ճանաչել

ԵՐԵՎԱՆ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի նախկին սենատոր Ռոբերտ (Բոբ) Դոուլը եւ նրա գլխավորած պատվիրակության անդամները հոկտեմբերի 14-ին այցելեցին Ծիծեռնակաբերդ, եղան ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Սենատոր Դոուլը ծաղիկ տնկեց իր հանգուցյալ բժշկի՝ Համբարձում Քելիհյանի հիշատակին: Այդ արարողությանը մասնակցում էր նաեւ բժշկի դուստրը՝ Ալիս (Արշալույս) Քելիհյանը:

Ապա Ռ. Դոուլը եւ «Լինս» հիմնադրամի գործադիր տնօրեն Ջ. Ալջյանը ծաղկեպսակ դրեցին եղեռնի զոհերի հիշատակին:

Լրագրողներին տված հարցազրույցում Ռ. Դոուլը ասաց, որ իր կարծիքով հայոց ցեղասպանությունը պետք է ճանաչվեր Միացյալ Նահանգների Կոնգրեսի կողմից: «Մենք մի քանի տարի առաջ մեծ ջանքեր գործադրեցինք, բայց ցավոք անհաջող: Գիտեմ, որ այլ երկրների խորհրդարաններ վերջին տարիներին հռչակագրեր են հրապարակել հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Ցեղասպանությունը պատմական փաստ է, եղել է եւ պետք է ճանաչել՝ առանց որեւէ կանխակալ վերաբերմունքի ներկայիս Թուրքիայի իշխանությունների հանդեպ», ասաց նա:

Դոուլի եւս մեկ ծառայությունը Հայաստանին

Վկայակոչում է Պարույր Հայրիկյանը

Այս օրերին Հայաստան այցելած նախկին սենատոր պրն Դոուլի գլխավորած պատվիրակությունը հետաքրքրություն է զուրս տնտեսական խնդիրներ: Սակայն, այցի առիթն օգտագործելով, մեր պարտքն ենք համարում երախտիքի խոսք ուղղել մեծ քաղաքական գործիչ պրն Դոուլի հասցեին եւ հիշեցնել պատմական մի դրվագ:

1990-ին, Գորբաչովը տարածաշրջանում եւ մասնավորապես Հայաստանում կայունության դիրքերը ամրապնդելու առիթ էր փնտրում, եւ այդ առիթը գտավ: Հայաստանում առկա գինված խմբավորումները զինաթափելու հեռեւանքում նա հայտարարեց, որ պետք է Հայաստանում արտակարգ դրություն մտցնել:

Պետք էր անմիջական արձագանքով կասեցնել վերահաս վտանգը, որովհետեւ ուղղված էր ոչ զինված խմբավորումների դեմ եւ անմիջական սպառնալիք էր կայացող հայկական պետականությանը: Հայաստանում առաջին անգամ ձեւավորվել էր ոչ կոմունիստական Գերագույն խորհուրդ՝ օրենսդիր մարմին, եւ, արհամարհելով այդ պիսի կառույցի գոյությունը, Գորբաչովը միաժամանակ ուզում էր հենց սկզբից ցույց տալ, որ այդ կառույցն, ըստ էության, իրավիճակի տերը չէ:

Մեզ այն ժամանակ հաջողվեց մի շարք ամերիկյան սենատորների եւ կոնգրեսականների՝ Ներկայացուցիչների պալատի անդամների հետ, երկու փաստաթուղթ պատրաստել (մեկը՝ սենատոր Հելմսի, մյուսը՝ կոնգրեսական Քրիստոֆեր Քոքսի գրասենյակում), որոնց տակ ստորագրում էին սենատորներ ու կոնգրեսականներ՝ առանձին-առանձին:

Երբ այս նախաձեռնությանը միացավ սենատոր Դոուլը, ստորագրողների թիվն անմիջապես կրկնապատկվեց:

Ի վերջո 40 սենատորներ ստորագրեցին մի փաստաթուղթ, որով Գորբաչովին ներկայացվում էր վերջնագիր. «...Հայաստանի նկատմամբ ճնշման կամ ռազմական դրության որեւէ ձեւի կիրառման դեպքում կխոչընդոտվեն Սովետական Միության հետ համագործակցության կամ նրան օգնություն ցույց տալու հետ կապված հետագա բանակցությունները եւ ներդրումները...»:

Փաստաթուղթը ներկայացվեց սովետական դեսպանություն, իսկ մեկ օրինակը՝ Հայաստանի Գերագույն խորհրդի նորընտիր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Վերջինս, չկամենալով Գորբաչովի հետ հանդիպումից առաջ արել իրավիճակը, իր բանագնացի միջոցով տեղեկացրեց, թե չի կամենում, որ Հայաստանի իշխանությունները լինեն այդ փաստաթուղթը բազմացնող ու տարածողը կամ այդ մասին աղմուկ բարձրացնողը:

Գորբաչովի հետ հանդիպման ժամանակ, սակայն, այդ փաստաթղթի գոյությունը իր դերն, իհարկե, կատարեց:

Վերջնագիրը ստացած Գորբաչովին ձեռնտու էր հայտարարել, որ իր տրամաբանությունից ետ է կանգնում ոչ թե ամերիկյան Սենատի ճնշմանը, այլ՝ Լ. Տեր-Պետրոսյանի խնդրանքով:

Հասարակությանը դա այդպես էլ մատուցվեց:

ԻՄ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի այցը Մոսկվա

Սկիզբը էջ 1

ԼՂՀ ղեկավարն ասել է, թե իր կարծիքով Ղարաբաղն ունի ժողովրդավարական պետություն դառնալու բոլոր հնարավորությունները: «Մենք իրատես ենք: Մենք ելնում ենք այն բանից, որ հազիվ թե Ղարաբաղը կարող է լինել բառիս բուն իմաստով լիարժեք պետություն: Մենք կարծում ենք, որ, բնականաբար, հնարավոր են մեր պետականության որոշ սահմանափակումներ: Սակայն ամեն դեպքում Լեռնային Ղարաբաղը պետք է լինի միջազգային իրավունքի սուբյեկտ: Միայն դա կարող է պաշտպանել Լեռնային Ղարաբաղին հնարավոր ոտնձգություններից ապագայում»: Մեկ այլ հարցի պատասխանելիս Արկադի Ղուկասյանը հայտնել է հետեւյալը. «Լեռնային Ղարաբաղն այսօր դե ֆակտո անկախ է: Դա իրականություն է, որի հետ հարկ է հաշվի նստել: Եվ Լեռնային Ղարաբաղը պատրաստ է հրաժարվել այդ անկախության մի մասից եւ Ադրբեջանի հետ որոշակի հարաբերություններ կառուցել: Թե դա ինչ տեսք կունենա թղթի վրա եւ թե ինչ արդյունքի մեզ կգանք, պետք է որոշվի բանակցություններում»: Չբացառելով, որ որոշ լիազորություններ կարող են փոխանցվել Ադրբեջանին, ԼՂՀ-ի նախագահը միաժամանակ հանդգնված է, որ Հայաստանը պետք է ուղղակի պատասխանատվություն կրի Լեռնային Ղարաբաղի անվտանգության համար: Նշելով, որ իրեն հայտնի չեն Ստրասբուրգում կայացած Տեր-Պետրոսյան-Ալիեւ հանդիպման մանրամասները, պրն Ղուկասյանն, ընդսմին, հաստատեց Ստեփանակերտի այն հայտնի տեսակետը, համաձայն որի դարաբաղյան խնդրի որեւէ քննարկում չի կարող արդյունավետ լինել, եթե տեղի է ունենում առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցության: Անդրադառնալով դարաբաղյան հարցին մեծ տերությունների մոտեցումներին, Արկադի Ղուկասյանը կարծիք հայտնեց, որ նրանց միջեւ տեղի է ունենում պայքար կասպյան նավթի եւ Միջին Ասիայի նավթի եւ գազի պաշարները տնօրինելու համար եւ այդ պայքարում Միացյալ Նահանգների խնդիրն է Ադրբեջանը ռուսաստանյան ազդեցության ոլորտից դուրս բերելը: Արկադի Ղուկասյանը համամիտ չէ այն տարածված տեսակետին, որի համաձայն դարաբաղյան հակամարտության ռազմական փուլում Ռուսաստանն աջակցում էր Հայաստանին: ԼՂՀ-ի առաջնորդը հակված է կարծելու, որ Ռուսաստանն ավելի շատ օգնում էր ադրբեջանական կողմին: Ներկայումս, ըստ նրա, Մոսկվան հանդես է գալիս առարկայական դիրքերից եւ պաշտպանում է Ռուսաստանի շահերը: «Էխո Մոսկվի» ռադիոկայանի հարցերից մեկը վերաբերում էր այն նախաձեռնությանը, որը Ստրասբուրգում հանդես են բերել նախագահներ Ելցինն ու Շիրակը: Ինչպես հայտնի է, այն նախատեսում է քառակողմ հանդիպում՝ Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահների մասնակցությամբ: Արկադի Ղուկասյանի խոսքերով, Ստեփանակերտն այդ հանդիպմանը մասնակցելու հրավեր չի ստացել: Հանգամանքն, որը ինքնին հարցականի տակ է դնելու ծրագրվող գագաթաժողովի արդյունավետությունը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Գլխավոր եւ հրատարակիչ
«Ազգ» բերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / հեռ. 562863
Հանձնարարչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածը «Ազգ» բերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

Պիրակի՝ հոկտեմբերի 12-ին, Ռուսաստանի լրատվամիջոցները հաղորդեցին իրար հետ առերեւույթ չկապված երկու տեղեկություն՝ Բաքվորկոստանի «պետական անկախության» 7-րդ տարեդարձի հանդիսությունների եւ Գրոզնիում Անվտանգության խորհրդի քարտուղար Իվան Ռիբկինի վարած բանակցությունների մասին: Ընդգծվեց, թե Ռիբկինը Չեչնիայի նախագահ Ասլան Մասխադովին կասկած, Չեչնիան չէ: Դա Գրոզնու եւ Մոսկվայի ներքին գործն է, ի վերջո: Բայց այս խնդիրն ինձ մտահոգում է այն առումով, որ Մոսկվան, շատ հնարավոր է, իբրեւ արցախյան հակամարտության միջնորդ կողմ, ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահներից մեկը, Ադրբեջանի կազմում այդպիսի մի «անկախություն» առաջարկի նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Այս համապատկերում ոչ մի լավ բան չեմ ակնկալում Ստրասբուրգում հոկտեմբերի 10-ին Ելցինի եւ Շիրակի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունից՝ Մոսկվա հրավիրելու ՀՀ եւ ԱՀ նախագահներ Տեր-Պետրոսյանին ու Ալիեւին քառակողմ բանակցությունների:

Ինչո՞ւ «քառակողմ»: Ինչո՞ւ Ելցինն ու Շիրակը հերթական անգամ ցուցադրաբար անտեսում են իրական հակամարտողներին՝ արցախահայությանը, նրա օրինական նախագահին: Ուզում են մեկ անգամ եւս ընդգծե՞լ, թե իրենց աչքում այս հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ընթացող «տարածային վեճ» է: Բայց չէ՞ որ նույնիսկ խորհրդային ղեկավար Միխայիլ Գորբաչովը ժամանակին ընդունում էր, թե «Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ» ծագած վեճն իր հիմքում Ադրբեջանի հակամարդկային ազգային քաղաքականության հետեւանքն է, Բաքվի կողմից տասնամյակներով իրականացված ազգային ճնշման եւ արցախահայությանն իր իսկ բնօրրանից դուրս մղելու գործելակերպի արդյունքը: Ինչո՞ւ Ելցինն այսօր էլ ավելի հետադիմական կեցվածք է որդեգրել, քան այդ անում էր նույնիսկ նրա նախորդը: Շիրակի ու Բլինքենի, նրանց նվագի տակ պարող մյուս մեծ ու փոքր պետական այրերի վերաբերմունքը դեռ էլի հասկանալի է՝ աշխարհաքաղաքական շահագրգռություններին, նավթային շահերին, Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու հարցեր կան: Իսկ Ելցի՞նն ինչու է միացել այս «պարին»:

Կարծում եմ՝ հետեւյալ պատճառներով: Ելցինը չի կարող հանդես գալ ԼՂՀ անկախության ճանաչման դիրքերից, որպեսզի Չեչնիայի եւ իր մյուս ազգային կազմավորումների համար խիստ անցանկալի նախադեպ չստեղծվի: Երկրորդ՝ նակարեւորն է, Ելցինը կրկին «սիրախաղ» է սկսել Ադրբեջանի հետ՝ նրան իր ազդեցության ոլորտում պահելու, Անդրկովկասի նաեւ այս հանրապետությունում «իր ոտքին տեղ անելու» համար, եւ ակնհայտ է, որ դրա դիմաց նա պատրաստ է զիջումներ անելու Բաքվին, հասկանալի է, մեր հաշվին:

Եթե խնդիրը դիտարկենք «քաղաքականությունը բարոյական լինել չի կարող» սկզբունքի տեսակետից, ապա Ելցինը, թվում է, գործում է միանգամայն տրամաբանորեն: Ռուսաստանի համար իսկապես անչափ կարեւոր է Ադրբեջանում իր ազդեցության ուժեղացումը: Բայց զարմացնում է այն բութ համառությունը, որով ռուսական դիվանագիտությունը, հարյուրավոր անգամներ համոզվելով կովկասյան թաթարների կամ ազերիների դարավոր հակառուսականության մեջ, վերջ չի տալիս անցյալ դարերին: Դարերով խաբվել են եւ ոչինչ չի սովորել, ի՞նչ արած: Ահա այս անգամ էլ Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը 7 ժամ շարունակ փակ դռների ետեւում բանակցություններ է վարել Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Հասկանալի է, որ դրանից առաջ Պրիմակովը գոնե 7-րոպեանոց հանդիպում չէր ունեցել Անդրկովկասում Ռուսաստանի հիմնական դաշնակցի Հայաստանի նախագահի հետ: Բայց ո՞վ է այնքան միամիտ, որ հավատա, թե 7 ժամ շարունակ բանակցող կողմերը որեւէ կերպ չեն շոշափել Հայաստանի շահերը: Ալիեւը պահը բաց կթողնե՞ր: Ոչ: Ահա եւ կարելի է ենթադրել, թե Մոսկվայում «քառակողմ» հանդիպում անցկացնելու գաղափարը հենց Ալիեւն է հուշել Պրիմակովին, ինչը Ելցինը Ստրասբուրգում հրամցրել է իբրեւ իր ու Շիրակի համատեղ «ստեղծագործություն»:

Ելցինը ներկայացնում է հենց այն Ռուսաստանը, որն անհուսալի է իբրեւ դաշնակից եւ անկանխատեսելի՝ իբրեւ բարեկամ: Վկան արյունակից ու դավանակից սերբերին ՆԱՏՕ-ական օդուժի հարվածներին ենթարկելու որոշման օգտին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում «կողմ» քվեարկելն էր, որը մնալու է պատմության մեջ՝ իբրեւ Ռուսաստանի հավերժական խայտառակություն: Երրորդ, եւ սա ամենակարեւորն է, Ելցինը կրկին «սիրախաղ» է սկսել Ադրբեջանի հետ՝ նրան իր ազդեցության ոլորտում պահելու, Անդրկովկասի նաեւ այս հանրապետությունում «իր ոտքին տեղ անելու» համար, եւ ակնհայտ է, որ դրա դիմաց նա պատրաստ է զիջումներ անելու Բաքվին, հասկանալի է, մեր հաշվին:

Եթե խնդիրը դիտարկենք «քաղաքականությունը բարոյական լինել չի կարող» սկզբունքի տեսակետից, ապա Ելցինը, թվում է, գործում է միանգամայն տրամաբանորեն: Ռուսաստանի համար իսկապես անչափ կարեւոր է Ադրբեջանում իր ազդեցության ուժեղացումը: Բայց զարմացնում է այն բութ համառությունը, որով ռուսական դիվանագիտությունը, հարյուրավոր անգամներ համոզվելով կովկասյան թաթարների կամ ազերիների դարավոր հակառուսականության մեջ, վերջ չի տալիս անցյալ դարերին: Դարերով խաբվել են եւ ոչինչ չի սովորել, ի՞նչ արած: Ահա այս անգամ էլ Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը 7 ժամ շարունակ փակ դռների ետեւում բանակցություններ է վարել Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Հասկանալի է, որ դրանից առաջ Պրիմակովը գոնե 7-րոպեանոց հանդիպում չէր ունեցել Անդրկովկասում Ռուսաստանի հիմնական դաշնակցի Հայաստանի նախագահի հետ: Բայց ո՞վ է այնքան միամիտ, որ հավատա, թե 7 ժամ շարունակ բանակցող կողմերը որեւէ կերպ չեն շոշափել Հայաստանի շահերը: Ալիեւը պահը բաց կթողնե՞ր: Ոչ: Ահա եւ կարելի է ենթադրել, թե Մոսկվայում «քառակողմ» հանդիպում անցկացնելու գաղափարը հենց Ալիեւն է հուշել Պրիմակովին, ինչը Ելցինը Ստրասբուրգում հրամցրել է իբրեւ իր ու Շիրակի համատեղ «ստեղծագործություն»:

Ընդսմին, Ալիեւը հրաշալի գիտի, որ Երեւանի եւ Ստեփանակերտի միջեւ կարգավորման ձեւերի ընտրության հարցում տարաձայնություններն ամենեւին էլ «խաղ» չեն: Ելցինի ու Շիրակի շուրթերով Տեր-Պետրոսյանին «Տիզբոն» հրավիրելով, այս ծեր աղվեսն, անկասկած, հույս ունի Տեր-Պետրոսյանից կորզել այնպիսի խոստումներ, որոնք կարող են խորացնել այդ տարաձայնությունները: Կհաջողվի, լավ, չի՞ հաջողվի փորձը փորձանք չէ, ահա Ալիեւի տրամաբանությունը: Խորամանկ, նենգ, բայց խելացի քայլ է, չթերագնահատենք: Ունե՞նք նույնքան խելացի բարեկամ, ի դեմս թեկուզեւ նույն Ելցինի: Հազի՛վ թե: Եվ այստեղ, կարծում եմ, մենք ինքներս էլ մեծ մեղք ունենք: Ռուսներն այնքան են համոզված մեր «հավատարմության» մեջ, մենք այնքան անթաքույց ենք ցուցադրում մեր ռուսամետությունը, որ Մոսկվան համոզված է՝ ինչպես էլ վարվի մեզ հետ, միեւնույն է, մենք այլ ելք չունենք, պիտի կառչենք իրենցից: Ինքներս դրա առաջացրեցինք եւս մեկ անգամ՝ Ռուսաստան-Բելառուս միությանն անդամակցելու օգտին 1 մլն ստորագրություն հավաքելով: Եվ հիմա խաղում ենք մեր նվիրվածության «պտուղները»: Ընդսմին, մեզ նեղություն չտվինք անգամ մտածելու, թե ինչպե՞ս է, որ բուլղարները, ռուսների համար շատ ավելի եղբայրական մի ժողովուրդ, այժմ ձգտում են «ծվարել» ՆԱՏՕ-ի թեւերի տակ, քան Մոսկվայի: Բուլղարները, հավանաբար, լավ են հասկացել, որ ժողովուրդների եղբայրությունն ա՛յլ բան է, պետական խաղաքաղաքականությունն՝ այլ: Նրանք համոզված չեն, որ Մոսկվան այսօր արտահայտում է ռուս ժողովրդի զգացմունքները: Իսկ ահա մենք ոչ մի կերպ չենք կարողանում հասկանալ, որ Ռուսաստանն ու պաշտոնական Մոսկվան տարբեր բաներ են: Եվ դա, կարծում եմ, կարող է ակնառու դառնալ հենց քառակողմ բանակցություններում: Ասված մի արաց, եթե մեր 1 մլն «կողմ» ձայները հարկադրված լինեինք փոխել... 3 մլն «դեմ»: Այդ արդեն կերեւա այն բանից, թե ի՞նչ է մեզ հրամցվելու քառակողմ բանակցություններում:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇՐՋԱՆ

Ի՞նչ է մեզ հրամցվելու քառակողմ բանակցություններում

«Առաջարկել է «անկախություն Ռուսաստանի կազմում», ի հավելումն չեչենական պատվիրակությանը հրավիրելով հոկտեմբերի 14-ին այդ հարցի առթիվ Պետական դումայում նախատեսված խորհրդարանական ունկնդրումներին մասնակցելու: Չեչենները սկզբում հրավերն ընդունել էին, սակայն ավելի ուշ, հավանաբար գլխի ընկնելով, թե Մոսկվան իրենց համար նախապատրաստում է Բաքվորկոստանի կարգավիճակից ոչ ավելի ինչ-որ բան, հրաժարվել են. պատճառաբանելով, թե ակնհայտ է, որ «պատգամավորների մեծամասնությունը տրամադիր չէ» իրենց «լսելու եւ հասկանալու»:

Այս տեղեկատվությունն ուշագրավ է նրանով, որ ռուսական դիվանագիտությունը համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ է դնում «անկախություն Ռուսաստանի կազմում» արտահայտությունը, եթե չասեմ անհեթեթ հասկացությունը, քանզի երեւույթն էլ հասկանալի է, որ անկախ պետության «կազմում» լինի «անկախ պետություն» գոյություն ունենալ չի կարող: Որեւէ պետության անկախության միջազգային-իրավական ճանաչման 1-ին նախապայմանը այսօր ՄԱԿ-ի անդամ լինելն է, իր տարածքի նկատմամբ նրա լիակատար ինքնիշխանության ընդունումը մյուս բոլոր պետությունների կողմից: Հետեւաբար, եթե Չեչնիան մնում է Ռուսաստանի կազմում, ապա Մոսկվայի ինքնիշխանությունը տարածվում է նաեւ Չեչնիայի վրա եւ վերջինս չի կարող դառնալ ՄԱԿ-ի անդամ: Էլ ինչ «անկախության» մասին է խոսքը: Իրենց ներքին հարցերի ինքնուրույն լուծման իրավունքի՞:

Բայց դա արդեն ինքնավարություն է, անկախություն չէ:

Տվյալ դեպքում իմ հոգսը, անպատասխան մնացած հարցերը, մասնագիտական բացատրության համար դիմեցինք Մարգարյանի անվան մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի բժշկագենետիկական կոնսուլտացիայի վարիչ, բժշկագիտության թեկնածու Նելլի Զուրաբյանին:

Տիկին Զուրաբյանը նույնդես փաստեց, թե տարիներ առաջ կատարված ուսումնասիրության արդյունքներով, բնածին արատների ցուցանիշով Հայաստանը չի գերազանցել Ռուսաստանին ու Անդրկովկասին: Բժշկուհու մասնագիտական բացատրության համաձայն, բնածին արատների պատճառները տարբեր են՝ քրոմոսոմային շեղումներ, երբ ամուսիններից մեկը կարող է լինել քրոմոսոմային փոփոխությունների կրող, արյունակիցների ամուսնություններով պայմանավորված շեղումներ, գենային շեղումներ, սթրեսներ, զանազան արտաքին գործոններ, որոնք դեղորայքներ, որոնք օգտագործվում են մինչեւ հղիությունը եւ հղիության ընթացքում: Կոնսուլտացիայի վարիչը բնածին արատների պատճառ համարեց նաեւ կատարախս հիվանդությունը, եթե ի հայտ է գալիս հղիության ընթացքում, բայց ոչ էկոլոգիական աղտոտվածությունը: Նա ասելով, բնածին արատները կարող են առաջանալ եւ մինչեւ հղիանալը, եւ հղիության առաջին երեք ամսում:

Մեր այն հարցին, թե հղիության շրջանում բնածին արատի ի հայտ գալու դեպքում հնարավո՞ր է շեղումները կանխել, տիկին Զուրաբյանը հայտնեց, որ իրենց խնդիրը հիմնականում կանխարգելիչ է: Ստուգում են հղիությունը նորմա՞լ է զարգանում, թե՞ ոչ: Զարգացումն ախտորոշվում է ուլտրաձայնով (էխոյով): Դրանից բացի, գոյություն ունի հետազոտման հատուկ մեթոդ: Եթե ծնողներից որեւէ մեկի մոտ կան քրոմոսոմային փոփոխություններ կամ արդեն քրոմոսոմային որեւէ հիվանդություն՝ հետազոտումը կատարվում է մինչեւ 11 շաբաթականում, այսինքն այն ընթացքում, երբ դեռեւս կարելի է արհեստական վիժում իրականացնել: Եթե քրոմոսոմները նորմալ են՝ հղիությունը պահպանվում է մինչեւ վերջ, պտղի հիվանդ լինելու դեպքում միակ միջոցը հղիության ընդհատումն է: Իսկ եթե հիվանդությունը չի ախտորոշվում եւ բուժումը չի կատարվում մտավոր թույլ երեխաներ են ծնվում:

Ինչ վերաբերում է չքերության պատճառներին, կոնսուլտացիայի վարիչն այն հիմնականում պայմանավորեց բորբոքային եւ զանազան վարակիչ հիվանդություններով: Չքերության պատճառ կարող են լինել նաեւ բնածին արատների համար թվարկված պատճառները:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բնածին արատներից ձերբազատվելու միակ միջոցը...

«Ազգի» էջերում առիթ ունեցել ենք խոսելու վերջին տարիներին հանրապետությունում փաստագրված ծնելիության անկման եւ չքերության բարձր տոկոսների մասին, որը ՀՀ առողջապահության նախարարությանը հարկադրեց ընդունել վերարտադրողական առողջության ազգային ծրագիր: Մեր ունեցած տեղեկություններով, ցավալիորեն, Հայաստանը չքերության ցուցանիշներով աշխարհում առաջնային տեղերից մեկն է զբաղեցնում: Առողջապահության նախարարության տվյալներով, բարեբախտաբար, բնածին արատները մեզ մոտ չեն հասում ընդունելի սահմանագիծը՝ մեծ թիվ չեն կազմում: Հիշեցնենք, որ ազգային զարթոնքի տարիներին այս երեւույթներն ուղղակիորեն կապվում էին էկոլոգիայի հետ: Որքանո՞վ են ճշմարտությանը համապատասխանում այդ խոսակցությունները եւ որո՞նք են չքերության եւ բնածին արատների իրական պատճառները, մասնագիտական բացատրության համար դիմեցինք Մարգարյանի անվան մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի բժշկագենետիկական կոնսուլտացիայի վարիչ, բժշկագիտության թեկնածու Նելլի Զուրաբյանին:

Տիկին Զուրաբյանը նույնդես փաստեց, թե տարիներ առաջ կատարված ուսումնասիրության արդյունքներով, բնածին արատների ցուցանիշով Հայաստանը չի գերազանցել Ռուսաստանին ու Անդրկովկասին: Բժշկուհու մասնագիտական բացատրության համաձայն, բնածին արատների պատճառները տարբեր են՝ քրոմոսոմային շեղումներ, երբ ամուսիններից մեկը կարող է լինել քրոմոսոմային փոփոխությունների կրող, արյունակիցների ամուսնություններով պայմանավորված շեղումներ, գենային շեղումներ, սթրեսներ, զանազան արտաքին գործոններ, որոնք դեղորայքներ, որոնք օգտագործվում են մինչեւ հղիությունը եւ հղիության ընթացքում: Կոնսուլտացիայի վարիչը բնածին արատների պատճառ համարեց նաեւ կատարախս հիվանդությունը, եթե ի հայտ է գալիս հղիության ընթացքում, բայց ոչ էկոլոգիական աղտոտվածությունը: Նա ասելով, բնածին արատները կարող են առաջանալ եւ մինչեւ հղիանալը, եւ հղիության առաջին երեք ամսում:

Մեր այն հարցին, թե հղիության շրջանում բնածին արատի ի հայտ գալու դեպքում հնարավո՞ր է շեղումները կանխել, տիկին Զուրաբյանը հայտնեց, որ իրենց խնդիրը հիմնականում կանխարգելիչ է: Ստուգում են հղիությունը նորմա՞լ է զարգանում, թե՞ ոչ: Զարգացումն ախտորոշվում է ուլտրաձայնով (էխոյով): Դրանից բացի, գոյություն ունի հետազոտման հատուկ մեթոդ: Եթե ծնողներից որեւէ մեկի մոտ կան քրոմոսոմային փոփոխություններ կամ արդեն քրոմոսոմային որեւէ հիվանդություն՝ հետազոտումը կատարվում է մինչեւ 11 շաբաթականում, այսինքն այն ընթացքում, երբ դեռեւս կարելի է արհեստական վիժում իրականացնել: Եթե քրոմոսոմները նորմալ են՝ հղիությունը պահպանվում է մինչեւ վերջ, պտղի հիվանդ լինելու դեպքում միակ միջոցը հղիության ընդհատումն է: Իսկ եթե հիվանդությունը չի ախտորոշվում եւ բուժումը չի կատարվում մտավոր թույլ երեխաներ են ծնվում:

Ինչ վերաբերում է չքերության պատճառներին, կոնսուլտացիայի վարիչն այն հիմնականում պայմանավորեց բորբոքային եւ զանազան վարակիչ հիվանդություններով: Չքերության պատճառ կարող են լինել նաեւ բնածին արատների համար թվարկված պատճառները:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

ԼՂՀ-ն պատրաստ է ձմռանը

Վերջերս ԼՂՀ կառավարությունը հաստատել է «Ձմեռ-1997-1998» ծրագիրը, որի համաձայն ձմռանը նախապատրաստվելու համար նախատեսվում է ծախսել 411,8 մլն դրամ. 277,5 մլն դրամ՝ ԼՂՀ ձեռնարկությունների, հիմնարկների եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների սեփական միջոցների, 125,5 մլն դրամ՝ պետական բյուջեի եւ 8,8 մլն դրամ՝ մարդասիրական օգնության հաշվին:

Ըստ ծրագրի առաջիկա ձմռանը Ստեփանակերտում կենտրոնացված ջերմամատակարարմամբ ապահովվելու են հանրապետական հիվանդանոցը, ծննդատունը, «Ղարաբաղ» հյուրանոցը, «Արցախբանկը», երաժշտական դպրոցը, երիտասարդության եւ մշակույթի պալատը, քաղաքային վարչակազմի, ԼՂՀ Ազգային ժողովի եւ ԼՂՀ կառավարության շենքերը:

Նկատելի աճ ԼՂՀ գյուղատնտեսության բնագավառում

ԼՂՀ վիճակագրության հաղորդագրության համաձայն, 1997 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետության բոլոր կարգի տնտեսություններում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ մսի գնումները սպանդային քաշով կազմել են 70,2 տոկոս, կաթինը՝ 53,7 տոկոս, ձվի գնումները ավելացել են 2,9 անգամ: Նույն աղբյուրի տվյալներով, ընթացիկ տարվա սեպտեմբերի դրությամբ ԼՂՀ կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններում անցյալ տարվա համեմատ անասունների եւ թռչունների (կենդանի քաշով) իրացման աճը Լեռնային Ղարաբաղում կազմել է 6,2 տոկոս, ձվինը՝ 4,4 տոկոս: Այդ ցուցանիշներն ըստ շրջանների գերազանցել են Մարտակերտում, Մարտունում եւ Ասկերանում: Վիճակագրության տեղեկատվությամբ անցյալ տարվա համեմատ նվազել է միայն կաթի արտադրությունը, որը կազմել է 87,9 տոկոս:

ՎԱՀԵՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանում նշվել է Թարգմանչաց տոնը

Օրերս Իրանի տարբեր քաղաքներում նշվել է Մշակույթի օրը, որին մասնակցել են ազգային կազմակերպությունների, Թեմական խորհրդի, Ուսանողական միության, «Այիլ» օրաթերթի եւ դպրոցների ներկայացուցիչները:

Մրցոց Թարգմանչաց տոնի առթիվ հանդես եկած բանախոսներն ընդգծել են հայ ժողովրդի մշակույթի զարգացման հիմք ծառայած մեր նոր տառերի գյուտի եւ թարգմանիչ վարդապետների աշխատանքի կարեւորությունը:

Տոնակատարության ավարտին հանդես են եկել «Գեղարդ» թատերախումբը, «Ուրարտու» եւ «Կոմիտաս» երգչախմբերը, անհատ կատարողներ:

«ԵՐԵՎԱՆ»

Վալանսը Իջեւանին է նվիրել 3 ավտոբուս՝ դեղորայքով ու գրենական պիտույքներով

ԻՋԵՎԱՆ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Շուտով Իջեւան կհասնի Ֆրանսիայի Տավուշի մարզկենտրոնի հետ ամիսներ առաջ եղբայրացած Վալանս քաղաքի քաղաքապետարանի նվիրաբերած երեք ավտոբուսը՝ բեռնված գրենական պիտույքներով, բուժսարքավորումներով եւ դեղորայքով:

Այս մասին Արմենպրեսի թղթակցին ասացին մարզի պատվիրակության անդամները, որ Վալանսի քաղաքային իշխանությունների հրավերով հոկտեմբերի սկզբին Ֆրանսիա էին մեկնել՝ մասնակցելու Վալանսի հետ եղբայրացած քաղաքների բարեկամության 30-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններին:

ԱԶԳ

Ոլորտային կառույցներ

Բնապահպանության նախարարությունը չի պահպանում բնությունը, բայց պետությունը պահպանում է նախարարությունը

115 աշխատող ունի բնապահպանության նախարարությունը, տեղավորված է Սարյան փողոցում, Բրյուսովի անվան ինստիտուտի հարեւանությամբ: Նույն շենքում են գտնվում նաեւ Երեւանի դասախազությունը, Կանանց հանրապետական խորհուրդը: Նախարարությունը ստեղծվել է 1995 թվականի հուլիսին՝ ՀՀ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարարության եւ ընդերքի պետական վարչության միացումով: Նրա կազմի մեջ են մտել «Հայանտառ» միավորումը, Հիդրոօդերեւութաբանական վարչությունը եւ օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովը: Բազմաթիվ վարչություններ ու ենթակա կառույցներ է ընդգրկում այս նախարարությունը. մթնոլորտի, ջրային պաշարների, կենդանական-բուսական աշխարհի, հողերի պահպանության, ընդերքի, փորձաքննության վարչություններ, տեսչություններ, եւ այլն: Սակայն դժվար է ասել, թե այս բոլոր օղակներն ինչո՞վ են զբաղված եւ ինչպե՞ս են իրականացնում իրենց առջեւ դրված խնդիրները, եթե անգամ այն շենքում, որտեղ տեղավորված են, էկոլոգիական նորմալ միջավայր չեն կարողանում ապահովել. մտնողն արտաքնոցի հոտից խեղդվում է: Դժվար է ասել ինչով են զբաղված մեկ այլ պատճառով էլ. օրերով կարող ես փնտրել վարչությունների պետերին եւ չգտնել: Թեեւ նոր նախարարն առավոտյան պարտադիր մուտքի ռեժիմ է սահմանել (ժամը 9.00-ին բոլորը ստորագրում են հաճախումների մատյանում), բայց օրվա մեջ վերահսկել, իհարկե, հնարավոր չէ, եւ քանի որ աշխատանք էլ չկա, ուրեմն ի՞նչ իմաստ ունի աթոռ մաշեցնելը: Այստեղ ընդմիջումը աշխատանքի ամենակարեւոր հատվածն է, որ ծեսի է վերածվել: Մեկուկես-երկու ժամ բոլոր դռները հանդիսավոր փակ են, ու շենքը՝ ամայի:

Այս նախարարության աշխատանքներն անմիջականորեն առնչվում են արտաքին հարաբերությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ: Քանի որ աշխարհում բնապահպանական աշխատանքներն այսօր խիստ կարեւորում են, անընդհատ կազմակերպվում են միջազգային կոնֆերանսներ, սիմպոզիումներ, խորհրդակցություններ: Բնապահպանական տեսակետից ոչ բարվոք վիճակում գտնվող Հայաստանի մասնակցությունը դրսում պարտադիր են համարում: Դա, իհարկե, բխում է ոչ միայն մեզ օժանդակելու բարի կամքից, այլեւ՝ աշխարհին մեզնից սպառնացող հնարավոր էկոլոգիական աղետը կանխելու կոնկրետ շահերից: Ուստի մեր մասնագետները մշտապես հրավիրվում են այդ միջոցառումներին (որպես կանոն, ոչ մեր հաշվին): Այսինքն՝ այս նախարարությունում աշխատողների մի զգալի խումբ շարունակ ուղեւորություններ է (դրանք տվյալ դեպքում էխսկուրսիաներ են նմանվում, քանի որ մեկնումների արդյունքում օգուտ գրեթե չկա): Փոխնախարարներից մեկին (Ս. Բալոյան), ասում են, Հայաստանում գրեթե չեն տեսնում. վարչությունների պետերի մի ոտքն այստեղ է, մյուսը՝ դրսում: Այս օրերին նախարարը նույնպես արտասահմանում է՝ Թուրքիայում:

Աշխատանքների մի զգալի բաժին էլ միջազգային ծրագրերն են:

9 միջազգային ծրագիր է այսօր իրականացվում բնապահպանության նախարարությունում: Դրանց անվանումները, կարծում եմ, շատ բան կհուշեն. «Հայաստանի կլիմայի փոփոխության ուսումնասիրություններ» (350 հազար դոլար), «Բնապահպանության նախարարության կառավարման համակարգի վերափոխում» (130 հազար), «Սեւանա լճի պահպանման գործողությունների ծրագիր» (485 հազար), «Անտառտնտեսության զարգացման ծրագրեր» (380 հազար եւ 62 հազար դոլար), «Շրջակա միջավայրի պահպանման գործողությունների ազգային ծրագիր» (200 հազար), «Ածխի պաշարների շահագործման եւ գնահատման ծրագիր» (2 մլն դոլար), «Ազգային ծրագիր օզոն քայքայող նյութերի կրճատման» (50 հազար), «Կենսաբազմազանության ստրատեգիա եւ գործողությունների ծրագիր եւ ազգային զեկույցի մշակում» (174 հազար): Այս ծրագրերին տրամադրվող գումարների մոտ 85 տոկոսը բաժին է ընկնում դրսից ժամանող փորձագետներին, որոնք երբեմն կասկածելի որակի դասախոսություններ են կարդում եւ խորհուրդներ տալիս: Ծրագրերի բովանդակության մնացած մասը մի խումբ մասնագետների՝ (հայաստանյան չափանիշներով) բարձր աշխատավարձ տալով աշխատեցնելն է (իրականում նրանց փորձագետը մեկ օրում 3-4 անգամ ավելի է ստանում, քան մերը՝ 1 ամսում): Իսկ այդ աշխատանքը բացառապես հանգում է տվյալներ հավաքելուն, վերլուծություններ կատարելուն: Նախարարությունում կա նաեւ բարձրաձայն չարտահայտվող կարծիք, որ սա մեր պետության համար կարեւոր ստրատեգիական տվյալները բաց ու անարգել ուրիշներին մատուցելու եղանակ է: Կոնկրետ օգնություն՝ ֆինանսների կամ տեխնիկական օգնության ձեւով, միջազգային ծրագրերից մենք չենք ստանում (բացի նախարարության ստացած 1-2 կոմպյուտերը): Միայն «կառավարման համակարգի վերափոխում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչեւ 1998-ի մարտը 15 համակարգիչ տրամադրել այս աղքատ նախարարությանը:

Անշուշտ սենյակները, վաղուց չնորոգված շենքը, մի սենյակում 6-7 հոգով նստելը, անգամ գրելու թղթի բացակայությունը վկայում են Բնապահպանության նախարարության խեղճության, հասարակության եւ իշխանությունների կողմից մոռացվածության մասին: Ասում են՝ այս նախարարությունը միայն ուժեղ նախարարը կփրկեր, եւ աշխատակազմը որոշակի հույսեր էր կապում 1997-ի հուլիսի 24-ին նշանակված Սարգիս Շահազիզյանի հետ: Սակայն ոչ միայն էկոլոգ չլինելը եւ համակարգի խնդիրները չպատկերացնելը, այլեւ փոքր-ինչ տարօրինակ աշխատաոճը այդ հույսերն առայժմ չեն արդարացնում: Շուտով երեք ամիս կլինի, ինչ նշանակվել է պրն. Շահազիզյանը, բայց աշխատակազմի մի մասը նրան դեռ չի հանդիպել: Անգամ որոշ վարչությունների պետեր նրա հետ զրուցելու պատվին չեն արժանացել: Ասում են՝ նախարարն այս ընթացքում ծանոթանում էր գործերին եւ նոր կառուցվածքային փոփոխությունների կոնցեպցիա մշակում: Ոչ ոք չգիտե, թե ինչ է ընդգրկում այդ կոնցեպցիան, ողջ աշխատակազմը վախի ու անորոշության մեջ է: Սպասվում են կադրային փոփոխություններ, եւ այդ ընթացքում գուշակություններ կատարվում. 4 փոխնախարարներից 1-2-ը կհեռանան, կգնա հավանաբար նաեւ իրավաբանը, ոմանց հարցերը կլուծվեն կառուցվածքի միջոցով, ինչ-որ օղակներ կվերանան, կմիավորվեն եւ այլն: Սակայն ամեն ինչ առայժմ գաղտնի է:

Այս նախարարությունը շահերի բախում ունի այլ գերատեսչությունների (հատկապես գյուղնախարարության) հետ եւ, կարծում են, իրենց խաղաթղթերը շուտ բացելը կարող է լուրջ խոչընդոտների տեղիք տալ: Ասենք, ջրօգտագործման եւ ջրի պահպանության կառավարումը դրված է տարբեր մարմինների վրա: Այստեղ հասկացված են, որ ջրօգտագործման արդյունավետությունն ապահովելու խնդիրը եւս պետք է դրվի բնապահպանության նախարարության վրա՝ վերցվելով գյուղատնտեսության նախարարությունից: Որպես փաստարկ՝ բերվում է վերջին տարիներին ոռոգման նպատակով ջրառի կրճատումը (2,5 մլրդ խմ-ից 650 մլն խմ):

Բնապահպանական իրավիճակը անհանգստացնող է

Միջազգային ծրագրերի, կառուցվածքային փոփոխությունների ու արտասահմանյան ուղեւորությունների նկատմամբ 0,39 հա գյուղատնտեսական նշանակության հողեր եւ 0,1 հա վարելահող:

Հայաստանում գոյացող թափոնների քանակը կրճատվել է (արդյունաբերության չաշխատելու պատճառով), բայց լուրջ է ատոմակայանի թափոնների խնդիրը, որի գերեզմանոցի կառուցման մասին իմացանք վերջերս մամուլում տպագրված հաղորդագրությունից: Ոչ ատոմակայանի թափոնների, ոչ էլ ռադիոակտիվ խնդիրների վերաբերյալ բնապահպանության նախարարությունը լիարժեք տեղեկություն չի տնօրինում:

Ինչ վերաբերում է մթնոլորտային աղտոտվածությանը: Այստեղ եւս արդյունաբերության կաթվածահար վիճակը դրական դեր է խաղացել: Անցյալում ծխի մեջ կորած Երեւանն այժմ կարելի է էկոլոգիապես մաքուր քաղաք համարել, սակայն լուրջ խնդիր է դառնում տրանսպորտի արտանետումների հարցը՝ հատկապես կարարունակող (էթիլային) բենզինի օգտագործումը:

Այս եւ այլ խախտումներն արձանագրելու, վերահսկելու, կարգավորելու համար նախարարությունն ունի մոտ 300 աշխատողով բնապահպանական տեսչություն: Տեսուչները շրջում են իրենց կցված օբյեկտներում եւ բնությանը հասցրած վնասի հատուցում կամ վերականգնում պահանջում ընդհուպ տվյալ գործունեության դադարեցումը: Սակայն այստեղ էլ շատ չլուծված խնդիրներ կան: Նախ՝ տեսչական ֆունկցիաներ ունեցող մի շարք կազմակերպություններ խանգարում են միմյանց, արդա օրենսդրական դաշտի անբավարար գործելու հետ կապված՝ կամ տուգանքները չեն վճարում (այս տարի միայն Երեւանում արձանագրված 15,5 մլն դրամից վճարել են 500 հազարը), կամ չնչին գումարներ են վճարում (ջուրն աղտոտելու համար 2 հազար դրամ, հողը՝ 3-4 հազար):

Նախարարության գործունեության միջամտության ձեւերից մեկն էլ պետական բնապահպանական փորձաքննության իրականացումն է. «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը» պարզելու համար հանրապետության բոլոր ծրագրերը, հայեցակարգերը, հասկացողները, տնտեսական եւ սոցիալական գործունեության նախագծերը պետք է անցնեն փորձաքննություն (անգամ բենզակայանները եւ տնամառները): Սակայն այս ծառայությունը, չնայած ընդունված օրենքին եւ միջազգային փաստաթղթերին, կարելի է ասել, չի գործում: Այս տարվա 9 ամսում ընդամենը 30 օբյեկտ է դիմել փորձաքննության համար, այն էլ՝ տեսչության ջանքերով ու պարտադրանքով: Երկրորդ անգամ է նախարարը նամակով դիմում մյուս նախարարներին, որպեսզի վերջիններս հարգեն օրենքը:

Ընդհանրապես նախարարության աշխատանքների նկատմամբ հասարակության եւ պաշտոնյաների անտարբերությունը բնապահպանական գործունեության գլխավոր խոչընդոտներից է: Ասենք, Երեւանի մարզպետարանը կարող է կանաչ տարածքներից ըստ կամս հողահատկացումներ անել (ինչպես Բաբայան փողոցի դեպքում): Ըստ կարգի, բոլոր նման դեպքերում բնապահպանության նախարարությունը պետք է տա իր հավանությունը: Նախարարը դիմել է Երեւանի մարզպետին՝ գործող կարգը պահպանելու խնդրանքով, սակայն այն որեւէ ուշադրության չի արժանացել: Այսինքն՝ այս նախարարությունը ոչ միայն իր ոլորտի կառավարման մարմինը չէ, այլեւ չի վերահսկում վիճակը եւ չի կարողանում ազդել բնությանն առնչվող հարցերի լուծման վրա

Բնապահպանական խնդիրների հաղթահարված «լուծումները»

Տնտեսական եւ հաղթական բազմաթիվ խնդիրներ ունեցող երկրում բնապահպանությունը, բնականաբար, պիտի սայլի հինգերորդ անիվը դառնար: Դրա համար գումարներ որտեղի՞ց պիտի ծարվեին, եթե ուսուցչի աշխատավարձի կանոնավոր վճարումն անգամ անլուծելի խնդիր է դարձել մեզանում: Եվ եթե տնտեսում ենք՝ տնտեսում ենք ո՛չ պաշտպանության, ո՛չ էլ ներքին գործերի հաշվին, այլ՝ բնապահպանության: Իսկ նախարարությունն էլ պահում ենք, որ աշխարհում չասեն վայրենի ժողովուրդ ենք, որ թվա, թե քաղաքակիրթ ազգերի նման մենք էլ ենք մտահոգ, թե ի՞նչ ենք շնչում, ի՞նչ ենք ուտում, բնության ու կենդանական աշխարհի նկատմամբ ի՞նչ վերաբերմունք ունենք եւ սերունդներին ի՞նչ ենք ժառանգելու: Թեեւ չմոռանանք, որ մեզանում էլ է եղել էկոլոգիական խնդիրների նկատմամբ հասարակության մեջ առողջ հետաքրքրության աճի մի շրջան (արցախյան շարժման արմատներն էլ էկոլոգիական են): Սակայն այն շատ արագ քաղաքականացվեց, գուցե էկոլոգիայով զբաղվողները քաղաքական գործիչների պատմուճան հագան (բերեւս միակ բացառությունը Հակոբ Սանասարյանն էր, որ մինչեւ վերջ հավատարիմ մնաց իր սկզբունքներին) իսկ շարժումը նրա սահմանափակվեց «փակումների» շարքով, կամ քաղաքական սոցիալիզացիայի հիմք հանդիսացավ: Եվ շատ բնական է, որ էկոլոգիան գործիք դարձած գործիչներն այդպես էլ բնապահպանական քաղաքականություն ու կուլտուրա չձեւավորեցին եւ ինչպես «փակել էին», այնպես էլ արագ «բացեցին» «Նաիրիտն» ու ատոմակայանը:

Բնապահպանությունը հոբբի չէ, ոչ էլ՝ քաղաքական դիվիդենտներ շահելու միջոց: Լուրջ մասնագիտական որակներ է պահանջում, անմնացորդ նվիրում, քանի որ դեռ երկար ժամանակ Հայաստանը բնապահպանական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ միջոցներ չի ունենալու: Այն ամենօրյա սեւ աշխատանք է ենթադրում, որը կընդգրկի քաղաքում աղբահանության խնդիրներից մինչեւ մանուկների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքը: Եվ կիրականացվի բոլոր հնարավոր, անգամ ամենափոքր միջոցներով բնապահպանական խնդիրները քայլ առ քայլ լուծելու ճանապարհով: Դրա համար կիրառելով փիլ ֆինանսներ եւ շատ էնտուզիազմ պարունակող միջոցառումներ՝ կազմակերպելով շաբաթօրյակներ ու հասարակական արշավներ, յուրաքանչյուր դպրոցին կցելով կանաչ տարածք, Սեւանի ափերի մաքրման ու ձկնորսության արգելման հանրապետական օրեր հայտարարելով, հրապարակային ելույթներ ունենալով եւ ազգաբնակչությանը դիմելով:

Ըստ իս, բնապահպանության նախարարը ոչ թե պարզապես նախարար կոչվելու հավակնող մեկը պետք է լինի (ասում են՝ Սարգիս Շահազիզյանին Արմեն Սարգսյանն էր բերել Մոսկվայի մեր դեսպանատնից՝ բոլորովին այլ նախարարական աթոռ զբաղեցնելու առաջարկով), այլ՝ հանրապետությունում հեղինակություն վայելող մեկը, որը էկոլոգիան կհամարի իր կյանքի գործը եւ ամեն մի չորացած ծառ կհամարի իր պարտությունը:

ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Մեր նախարարությունները ներսուդրսից

Ի՞նչ է մնացել 1987-88 թթ. բնապահպանական պոռթկումից

Մեր սայլի բազմաթիվ հինգերորդ անիվներից մեկը

Փորձեցի փորիկ հարցում կատարել ծանոթներիս շրջանում. «Ի՞նչ եք զգում բնապահպանության նախարարություն բառակապակցությունը լսելիս»: Հարցվողների մեծ մասը հարցիս պատասխանում էր հարցով. «Իսկ նման նախարարություն կա՞»: Մյուսներն ինչ-որ աղոտ հիշողություններ էին պատմում՝ «Նաիրիտի», Սեւանի եւ ատոմակայանի հետ կապված: Իսկ իրականում ինչո՞վ է զբաղված այս նախարարությունը:

Փորձենք հասկանալ, թե ինչպես է ստեղծվել նախարարությունը: Ինչպես ասվեց, 1995-ին միավորվեցին երեք կառույց՝ բնապահպանության նախարարությունը, հիդրոօդերեւութաբանական ծառայությունը եւ հանածոների պաշարների պետական հանձնաժողովը: Ինչպես ասվեց, նախարարությունը ունի 115 աշխատող: Ինչպես ասվեց, նրանցից 300-ը տեսչություն է: Ինչպես ասվեց, նրանցից 85 տոկոսը բաժին է ընկնում դրսից ժամանող փորձագետներին, որոնք երբեմն կասկածելի որակի դասախոսություններ են կարդում եւ խորհուրդներ տալիս: Ինչպես ասվեց, ծրագրերի բովանդակության մնացած մասը մի խումբ մասնագետների՝ (հայաստանյան չափանիշներով) բարձր աշխատավարձ տալով աշխատեցնելն է (իրականում նրանց փորձագետը մեկ օրում 3-4 անգամ ավելի է ստանում, քան մերը՝ 1 ամսում): Ինչպես ասվեց, այդ աշխատանքը բացառապես հանգում է տվյալներ հավաքելուն, վերլուծություններ կատարելուն: Ինչպես ասվեց, նախարարությունում կա նաեւ բարձրաձայն չարտահայտվող կարծիք, որ սա մեր պետության համար կարեւոր ստրատեգիական տվյալները բաց ու անարգել ուրիշներին մատուցելու եղանակ է: Ինչպես ասվեց, կոնկրետ օգնություն՝ ֆինանսների կամ տեխնիկական օգնության ձեւով, միջազգային ծրագրերից մենք չենք ստանում (բացի նախարարության ստացած 1-2 կոմպյուտերը): Միայն «կառավարման համակարգի վերափոխում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչեւ 1998-ի մարտը 15 համակարգիչ տրամադրել այս աղքատ նախարարությանը:

Ինչպես ասվեց, ինչպես ասվեց, ինչպես ասվեց...

ԱԶԳ

Միջազգային

Հրեա մեկնաբանը թուրքերին քարոզչություն է սովորեցնում

«Դժբախտաբար լավատեղյակ դիտորդների մեծամասնությունը մտածում է, որ քարոզչության նպատակով Թուրքիայի ներդրած փողը պարզապես վատնված գումար է, որ Թուրքիան դրա դիմաց ոչինչ չի ստանում: Փաստ է, որ ԱՄՆ-ի Կոնգրեսում հզոր Թուրքիայի քարոզչությունը ցարդ մեծ հաջողության չի հասել»: Նման հայտարարությամբ է հանդես եկել վերջերս Թուրքիա այցելած հրեա մի քաղաքական մեկնաբան, որը «Թըրքիշ դեյլի նյուզ» թերթում իր նկատառումներն է շարադրել Վաշինգտոնում Թուրքիայի քարոզչական աշխատանքների անբավարարության մասին, եւ որին թերթը ներկայացրել է որպես «Վաշինգտոնի Ամերիկա-իսրայելական հասարակական հարաբերությունների կենտրոնի Միջին Արեւելքի հարցերով զբաղվող ավագ քաղաքական մեկնաբանի»: Թերթի տվյալներով այդ կենտրոնն «ամենաազդեցիկ քարոզչական խմբակցություններից մեկն է Վաշինգտոնում»:

Թուրքական թերթը չի բացատրում, թե ինչու է այս խորհրդատու-մասնագետը խորհրդավոր կերպով գերադասում անհայտ մնալ: Կարծում եմ, հայերիս համար անհրաժեշտ է, եւ նաեւ խիստ կարեւոր, իմանալ թուրքական եւ իսրայելական քարոզչական խմբակցությունների միջեւ գոյություն ունեցող կապերի մասին, պարզել թուրքական կողմի տկարությունները, եւ տեղեկանալ, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում ուժեղացնելու նրանց քարոզչական աշխատանքները: Ահա թե ինչ խորհուրդներ է տալիս թուրքերին վերոհիշյալ կենտրոնի անանուն մասնագետը:

«Շափազանց շատ են Թուրքիայի անունից քարոզչությամբ զբաղվողները: Նրանց միջոցներն մեկ ազդեցիկ ձայնը կարող է նույնքան, եթե ոչ ավելի, արդյունավետ լինել:

Կոնգրեսականները զբաղված մարդիկ են եւ բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերի հետ են առնչվում: Քանի որ շատ դեպքերում գործավարությունը նրանք վստահում են իրենց աշխատակիցներին, վերջիններս կարեւոր դեր են խաղում նրանց եզրակացությունների հանգման գործում:

Թուրքական դեսպանությունը քարոզչությամբ զբաղվողների հետ շատ ավելի լուրջ աշխատանք պետք է տանի, քան տարվել է մինչեւ այժմ:

Անկարան պետք է ավելի լավ կարողանա հասկանալ, թե ինչպես է գործում այդ համակարգն Ամերիկայում: Անկարան չպետք է միայն արհեստավարժ քարոզչական խմբակցություններին դիմի, այլ առավել վստահի ամերիկաբնակ թուրքերին եւ գործակցի նրանց հետ, քանի որ նրանք քաջատեղյակ են այդ համակարգին: Ամերիկյան այդ «բեւը» մշտապես տեղեկություններ պետք է հավաքի եւ ուղարկի Անկարա, որտեղ պետք է համակարգվեն ստացված բոլոր փաստերն ու մշակվեն համապատասխան մարտավարական գործողությունները:

Տեղական դրամահավաքման խնդիրը նույնպես խիստ կարեւոր է: Թվում է, թե Միացյալ Նահանգներում թուրք գործարարների մեծամասնությունը գերադասում է խոսել, թե ինչքան վատն է Թուրքիայի «իմիջը», փոխանակ այդ իմիջը բարելավելու օգտին աշխատելու եւ հարկ եղած դեպքում դրամական օժանդակություն կատարելու այդ նպատակի համար: Կոնգրեսականները շատ լավ են հիշում նվիրատվությունների աղբյուրները:

Կոնգրեսականները բավարարում են իրենց ծանոթ անձնավորությունների պահանջները: Հետեւաբար, ավելի մեծ թվով թուրքեր պետք է նրանց հանդիպեն: Ամերիկա-թուրքական խորհուրդն ու մյուս ամերիկա-թուրքական կազմակերպությունները պետք է ավելի շատ ամերիկացիների հրավիրեն Թուրքիա:

Մեկ ուրիշ բնագավառ եւս բարելավման կարիք ունի: Ամերիկացի կոնգրեսականներին պետք է բացատրել Թուրքիայի հետ սերտ հարաբերությունների առավելությունները: Նրանց պետք է հասկացնել, թե ինչու նրանք կառավարական պաշտոններ չեն զբաղեցնում: Նրանք մեծ ազդեցություն չունեն զանգվածային լրատվության վրա եւ չունեն մարտավարական գործելակերպ: Չեն մշակել դրամահավաքման համապատասխան մեթոդներ: Համեմատած հզոր Իսրայելի գործող քարոզչության հետ, որն արդեն հարյուր տարվա վաղեմություն ունի, թուրքական լոբբին չափազանց նոր է ու փոքր:

Քարոզչության համար կարեւոր է նաեւ հարստությունը: Անցած մի քանի տարիների ընթացքում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ թուրքերն քարոզչություն վարելու համար Թուրքիան վարձել է այս կամ այն հասարակությունը եւ արդյունքում ժամանակ անց հրաժարվել նրանից:

Անհրաժեշտ է, որ Անկարայում մշակվի քարոզչության երկարաժամկետ քաղաքականություն: Այդ գործը չպետք է թողնվի վարձու պրոֆեսիոնալ քաղաքագետներին»:

Այս մեջբերումներից հետո նշեմ, որ ինձ համար չափազանց հետաքրքիր էր «Թըրքիշ դեյլի նյուզ» թերթի նույն համարում մեկ ուրիշ հոդված հայտնաբերելը՝ նվիրված «անվանի գիտնական, դիվանագետ, խմբագիր, լրագրող եւ հաղորդավար» Դեն Պատրին, որը Սամբուլի «քաղաքական եւ հասարակական ուսումնասիրությունների կենտրոնում» հանդես էր եկել Ամերիկայի, Իսրայելի եւ ամերիկաբնակ հրեաների հարաբերությունների մասին դասախոսությամբ: Կարո՞ղ է, արդյոք, այս Պատրը վերոհիշյալ առաջին հոդվածում նշված «Ամերիկա-իսրայելական հասարակական հարաբերությունների կենտրոնը (ԱԻՀՀԿ) դրականորեն է վերաբերվում այն ամենին, ինչը նպաստում է իսրայելա-ամերիկյան հարաբերությունների զարգացմանը»:

Պատրին նաեւ հարցրել են, թե «եթե ԱԻՀՀԿ-ն դառնա առավելապես թուրքամետ, արդյո՞ք կարող է ճնշադատության թիրախ դառնալ Ամերիկայում գործող այլ քարոզչական խմբավորումների կողմից»: Նա պատասխանել է, որ կենտրոնը կոչահրավեր այնքիսի դիրքորոշում, որ «համապատասխանի Թուրքիայի, Իսրայելի, ինչպես նաեւ Ս. Նահանգների շահերին»:

Իր զեկուցման ընթացքում նա նշել է, որ Ամերիկայի հրեական քարոզչությունն անուղղակիորեն կազդի թուրք-իսրայելական հարաբերությունների վրա:

Հոդվածին կից հրատարակված նկարազարդում գրված էր. «Թուրքիայի կապերը հրեական քարոզչության հետ, որն ամենաուժեղն է Ս. Նահանգներում, վերջերս սերտացել են հետզհետե զարգացող թուրք-իսրայելական կապերի հետեւանքով: Թուրքական եւ հրեական քարոզչական կենտրոններն արդեն մի քանի ամիս է, ինչ համագործակցում են հույների եւ հայերի հակաթուրքական քարոզչության դեմ փորձելով հիդրահարել դժվարությունները, որոնց թվում է նաեւ Կոնգրեսում Թուրքիային զենք մատակարարելու առաջարկի սառեցումը»:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»

ԳՈՐԾԱՐՔԵՐ

ԱՄՆ-ը անզոր է «Տոտալի» դեմ

Շուրջ մեկ տարի է, ինչ ֆրանսիական խոշորագույն «Տոտալ» նավթային ընկերությունը «քաղաքական մեծ ամարտի է» դուրս եկել դ'Ամատոյի օրենքի դեմ, վերջինիս համար դատապարտելով փորձաքար եւ ինչ-որ չափով նաեւ գլխացավանքի առիթ: Ինչպես հայտնի է, 1996-ին, ԱՄՆ Կոնգրեսն ընդունել է դ'Ամատոյի օրենքը, որն Իրանի եւ Լիբիայի հետ 40 մլն դոլար գերազանցող համաձայնագրեր ստորագրելու դեպքում, պատժամիջոցներ է նախատեսում ամերիկյան եւ արտասահմանյան ընկերությունների եւ ընկերությունների դեմ: Հայտնի են նաեւ սենատոր դ'Ամատոյի օգնական Գրեգ Ռիկմանի նախազգուշացումները եվրոպական մի շարք ընկերություններին եւ գլխավորապես «Տոտալին»: Այնուամենայնիվ իրանական Սաութ Պարս Ֆիլդ հանքավայրի շահագործման վերաբերյալ վերջերս ստորագրված պայմանագիրը («Տոտալի», «Գազպրոմի», մալայզիական «Պետրոնաս» ընկերության եւ ԻԻՀ ազգային նավթային ընկերության միջեւ) ուղղակի փաստի առջեւ կանգնեցրեց ԱՄՆ Կոնգրեսին, ստիպելով ինչ-որ կերպ արձագանքել եւ ցուցաբերել «սեփական հետեւողականության» իրական գործակիցը:

Հարցը սկզբունքային է. հնարավոր լուծման դեպքում կարող է ստեղծել նախադեպ եւ հայտորդող գործընթացների զարգացմամբ, դեռ «բեղմնավոր վիճակում», վերջ ի վերջո բաղել ընդունված օրենքի խոստմնալից առյագան:

Եվ ահա օրերս «Վաշինգտոն փոստ» հայտնեց, որ անկախ նախնական զգուշացումներից, ԱՄՆ-ն այնուամենայնիվ մտադիր չէ կիրառել «Տոտալի» նկատմամբ խոստացված եւ ոչ մի պատժամիջոց: Թերթը նշում է, որ սա նախազգաստ Քլինթոնի դիրքորոշումն է, որը չի բացառում նաեւ «Եվրոպայի միջոցով նոր ճնշում Թեհրանի նկատմամբ, մինչեւ որ վերջինս հրաժարվի ահաբեկչական քաղաքականությունից»:

Հիշեցնենք, որ ստորագրված պայմանագրի գործարքային արժեքը 2 մլրդ դոլար է, իսկ «Տոտալի» բաժինը կազմում է 40 տոկոս: Ա. Դ.

Հելմուտ Քոլը նորից կառաջադրվի

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, DW: Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը Լայպցիգում ելույթ ունենալով կառավարող Քրիստոնեա-դեմոկրատական միության համագումարում, եւս 5 տարով կանցլերի պաշտոնին իր թեկնածությունը առաջադրելու աջակցություն ստացավ: Համագումարի շուրջ հազար պատգամավորներ Քոլի առաջարկը ողջունեցին երկարատեւ բուռն ծափահարություններով: Ավելի վաղ, Քոլը ՔԴՄ-ի անդամներին կոչ արեց ակտիվորեն նախապատրաստվել Բունդեստագի ընտրական արշավին, շեշտելով, որ դա Գերմանիայի ողջ պատմության ընթացքում ամենակատաղի կլինի: Կանցլերը միաժամանակ խիստ քննադատության ենթարկեց ընդդիմադիր Սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը եւ, մասնավորապես, այդ կուսակցությունից կանցլերի պաշտոնին հավակնող 2 հնարավոր թեկնածուներին: Ներքին Սաքսոնիա դաշնային երկրամասի վարչապետ Շրյոդերին Քոլն անվանեց օպորտունիստ, իսկ Սոցիալ-դեմոկրատների առաջնորդ Լաֆոնտենին մեղադրեց, թե նա իր ղեկավարած Սար երկրամասը տանում է ֆինանսական աղետի: Իր ելույթում Քոլն ընդգծեց ՔԴՄ-ի պատրաստակամությունը հետագայում եւս կոալիցիա կազմել Ազատ դեմոկրատական կուսակցության հետ:

ՀԱՄԱՌՈՏ

Իսրայելը Թուրքիային առաջարկել է համատեղ արտադրել հակաօդային հրթիռային համակարգեր

ԱՆԿԱՐԱ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելը Թուրքիային առաջարկել է համատեղ արտադրել հակաօդային պաշտպանության «Սամսոն» եւ «Դալիլա» համալիրներ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, այդ մասին հայտնի է դարձել Իսրայելի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ամնոն Շահակի Անկարայում գտնվելու ընթացքում: Իսրայելցի զորահրամանատարը Անկարային նաեւ առաջարկել է կարգավորել «Մերկավա-3» տանկերի համատեղ արտադրություն, որոնք համարվում են լավագույններից մեկն աշխարհում: Այդ նախագծով նախատեսվում է արտադրել հազար միավոր զրահատեխնիկա, որոնց գումարը կկազմի 4 միլիարդ դոլար: Իսրայելական կողմի մյուս առաջարկություններով նախատեսվում է մատակարարել չորս ռազմանավ Թուրքիայի ռազմածովային ուժերի համար, արդիականացնել վերջինիս F-5 եւ F-16 ռմբակոծիչ կործանիչները: Շահակի բանակցությունները հատկանշական են նաեւ նրանով, որ դրանցում պայմանավորվածություն է ձեռք բերվել ընթացիկ տարվա դեկտեմբերին Միջերկրական ծովում համատեղ թուրք-իսրայելական զորավարժություններ անցկացնելու շուրջ:

Բուլղարիա. 50 պատգամավորներ՝ նախկին գաղտնի գործակալներ

Բուլղարական «24 ժամ» թերթում տեղեկություններ են հրապարակվել, թե ներկայիս խորհրդարանի շուրջ 50 պատգամավորներ կոմունիստական վարչակարգի օրոք համագործակցել են բուլղարական գաղտնի ծառայությունների հետ: Բուլղարիայի ներքին գործերի նախարարը շուտով պետք է հրապարակի բուլղարական ԿԳԲ-ի հետ համագործակցած պատգամավորների, նախարարների եւ Գերագույն դատարանի անդամների անվանական ցուցակը: Ըստ կառավարական որոշման, Բուլղարիայում աղագաղտնիացվել են արխիվները եւ օգոստոսի 1-ից երկրի յուրաքանչյուր քաղաքացի դրանցից օգտվելու հնարավորություն է ստացել: *RFI*

Պարսից ծոցում ռազմանավերի կուտակում

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, DW: Ամերիկյան ավիակիր «Նիմիցը» 6 ռազմանավերի ուղեկցությամբ երեկ մտավ Պարսից ծոց՝ մեկ օր անց այն բանից հետո, երբ Իրանն այնտեղ սկսեց խոշոր ռազմածովային զորավարժություններ: Ինչպես հաղորդեց Իրանի հեռուստատեսությունը, տասնօրյա զորախաղերը ցուցադրելու են Իրանի ածած հզորությունը: Զորավարժություններին մասնակցում են Իրանի ավելի քան 50 ռազմանավեր, այդ թվում Ռուսաստանում կառուցված 2 սուզանավերը, ինչպես նաեւ ռազմօդանավեր եւ ուղղաթիռներ: Բահրեյնի տարածքում ջրերում հոկտեմբերի 4-ից արաբական 6 երկրներ նույնպես անցկացնում են մեծ ռազմածովային զորախաղեր:

21-րդ դարի կեսերին Նիգերիան բնակչության թվով կգերազանցի Եվրոպային

ՄԱԿ-ի ժողովրդագրական վարչությունը հրապարակել է հաշվետվություն աշխարհի ազգաբնակչության վերաբերյալ, որի համաձայն, վերջին տասնամյակում բնակչության աճի տեմպերն ընդհանուր առմամբ անշեղորեն նվազում են: Այսպես, եթե 90-ական թթ. սկզբներին աշխարհի բնակչությունն ավելանում էր տարեկան 90 միլիոնով, ապա այժմ այդ ցուցանիշը կազմում է մոտ 80 միլիոն:

Դրա պատճառը բնական աճի նվազումն է: Եթե 1950 թ. վիճակագրական տվյալներով յուրաքանչյուր կին կյանքի ընթացքում ծնում էր մոտ 5 երեխա, ապա 1995 թ. ընդամենը 2,9: Նույնիսկ բազմազավակ ընտանիքներով հայտնի Բանգլադեշում վերջին 20 տարում ընտանիքի զավակների միջին թիվը 7-ից իջել է 3,5-ի: Հույս է հայտնվել, որ Չինաստանը եւս կարող է հաղթահարել «ժողովրդագրական պայթյունը»:

Ցնցող է, դա տեղի կունենա, հավանաբար, չորս տասնամյակ հետո, գրում է «Կոմսոմոլսկայա պրավդան»:

Հաշվետվության հեղինակներն ընդհանուր առմամբ մտահոգության պատճառ չեն տեսնում, քանզի առաջիկա հարյուրամյակում երկրների մեծ մասի բնակչության թվակազմը կայունանալու է: Եվրոպայում կայունությունն արդեն առկա է: Այնտեղ հնարավոր է նույնիսկ բնակչության թվի կրճատում: Մինչդեռ, Հնդկաստանում դեռ շարունակվում է ազգաբնակչության արագ աճը: ՄԱԿ-ի մասնագետների կարծիքով, մոտավորապես 2050 թվականին Հնդկաստանը կունենա 1,6 մլրդ բնակիչ, առաջ անցնելով նույնիսկ Չինաստանից:

1996 թ. Աֆրիկան բնակչության թվով առաջ է անցել Եվրոպայից: Ենթադրվում է, որ բնական արագ աճի հետեւանքով միայն Նիգերիայի բնակիչների թիվը հասնելու է 350 մլն գերազանցելով բոլոր եվրոպացիների թվակազմը:

Պ. Ք.

Մի օր էլ եկավ նրա Երամը

1980-ի հոկտեմբերի 15-ին կյանքից հեռացավ Մուշեղ Գալշոյանը: Անունը մնաց հիշատակաց

Ասում են, տանտիրոջ խոսքը վերջում է լինում: Բայց ես, խախտելով այդ չգրված օրենքը, սույն մշակութային էջի «տանուտերի» իրավունքով ցանկանում եմ առաջինը խոսք ասել, հիշեցնելով ընթերցողին իրեն ներկայացվելիք հուշադասման առիթը:

Մուշեղը: Նա պետք էր մեզ այն ժամանակ: Նա պետք էր մեզ այսօր: Միշտ: Որովհետև կոիվ ուներ իր մեջ պահած: Լուսավոր ու սրբազան մի կոիվ՝ կեղծ ու տկար հայրենասիրության, աթոռամոլության եւ սամոնասաղաշտության, պոռոտախոսության եւ շողոքորթության, մարդկային ոգեզուրկ գեշնաքարության ու ստեղծագործական աղաշնորհության դեմ:

Կոիվ ուներ պահած իր օրերի եւ առավելագույնս մեր այս օրերի համար: Բոլոր ժամանակների սահակության եւ վասակների դեմ:

...Ասում էր. «Սասունցին լավ կենաց ունի՝ թշնամու կենացը: Էն թշնամու, որ սրիտակ ձին թամբած, սուրը գլխին, հավերժական տեսիլի պես միշտ աչքիդ առաջ է: Որ գոտկդ միշտ պինդ ծգած լինես, ափդ բռունցքված, հայացքդ կրակոտ: Ի՞նչ տղամարդ, եթե միշտ կռվի պատրաստ չլինի»:

...Կիսախուփ աչքերով երգում էր «Մշո սուլթան սուրբ Կարապետ» երգը եւ ասում. «Տես, իմ շենին (Սունդուկյան փողոցում-Թ. Հ.) դեմդիմաց կանգնած ու բնակիչներին դեռ չհանձնած այս բարձրահարկի բաց պատշգամբում միշտ նստած է էն տղան, անունը էդո է: Լրտեսում է ինձ: Էս բնակարանը նոր եմ ստացել եւ առայժմ արգելում եմ կախել վարագույրները: Էդոն գալիս է ամեն օր ուղիղ ժամը 5-ին, չի ուշանում, շաս է պարտաճանաչ: Գալիս, նստում է դիմացիս պատշգամբին, գրպանից հանում է մի տուփ «ՀԾ», դնում է բազրիքին, կողքին էլ մի շիշ գարեջուր: Ծխում ու ինձ է նայում, կում անում ու ինձ նայում, հետո նորից ծխում ու նորից նայում: Արդեն մի շաբաթ նայում է լակոտը: Հեռանում է միայն իր «կարիքի» համար, մի քանի ռոպեով: Առավոտյան, երբ «Գարուն» եմ գնում, միշտ նույն հեռավորության վրա ուղեկցում է ինձ, հետո խմբագրության մոտ, խաչմերուկներից մեկում անհետանում: Ժամը 5-ին «Գարուն»-ում նստած, զգում եմ. եկել է «իմ էդոն», բազմել պատշգամբում, կողքին մի տուփ ծխախոտ դրել, մի շիշ գարեջուր՝ ինձ է սպասում»:

Ասում էր. «Ուզում են ինձ հավասարակշռությունից հանել, ուզում են հրացանս վերցնեմ, կրակեմ էդոյի վրա: Բայց ես էդոյի վրա չեմ կրակելու: Ինչո՞ւ հետացնեմ նրա գործը: Թող էդպես նստի ու նայի, ինչպես եմ ես գրում, երգում, սիրում...»:

Մուշեղը: Սուր գիշերին անցնում էր ծառերի մոտով, ոտքերի տակ խշխշում էին չորացած-թափված տերեւները, ու ականջին ընկնում էր ծառերի գանգատը. «Զո՜ւր»... «Կկառուցեմ, գյուղում անտիպության ջրամբարը մարմնավորի... սասունցին: Եվ Մուշեղը ցնցված էր Սոսի մեծ հայության, հայրենասիրության, կարոտի, ադրումների, հենց ծորիմիրության համար: Եվ ինչ-որ տեղ զուր ենք ասում ու տեղայնացնում մարդկանց: Սոսը լոռեցի է, բայց արի ու նրա կողքին դիր ցանկացածդ սասունցուն, որ ավելի սասունցի լինի, քան Սոսն է:

Մուշեղը երբեք միամիտ չէր: Մարդիկ դեռ անկեղծությունը շփոթում են միամտության հետ: Այ, նա մեծ անկեղծ էր: Անկեղծ ու ազնիվ էր իր ծեռագրի նման: Նա այն մարդը չէր, որ գրկվելով մեծից, հրաժարվում է նաեւ փոքրից: Արյան միջոցով, ծնողների, երգից հազիվ փրկվածների ախուվախերի միջից գծում էր Առաքելոց վանքով Սուք տանող, երգիր ֆանող իր ճամփան, ամեն պատմություն դարձնելով էլ պատմվածք, ակնարկ, էսսե, բայց եւ ավելի էր սիրում, կապվում փրկված մեր քարուքանդին: Մուշեղը մեծ կորուստիրոջ՝ իր խորը սերը ոչ միայն գրականությամբ, այլ աղրած կյանքի ամեն մի օրով դնում էր իր հողի մեջ: Հողի մեջ, ոչ երբեք երեսին: Եվ արդար կռիվ էր նրա կյանքը: Ցավում էր մեր հողի համար: Ամեն օր հող ենք կորցնում չմտածելով, լռելով, գյուղից հեռու գալով: Մասնագիտությամբ չինելով գյուղատնտես հողի գինն ավելի գիտեր: Հողի, ասել է ջրի, բերքի ու բարիքի, ճանապարհի: Մտել է մարդու, նրա արդուսքի, նրա կապվածության: Նրա գրքերը՝ լավ անուններ ունեն: «Կռունկ», «Ծաղկած քարեր», «Բովտուն», «Ձորի Միրոն»... Այսօր նաեւ շնորհակալ լինենք գրողի այրուց տիկին Ագնես Դափլանյանից, որ կարողացավ հավաքել Մուշեղի ձեռագրերը, թերթերում, ամսագրերում տպագրված նրա ակնարկները, էսսեները հավաքեց ու տարբեր տարիներին հրատարակեց առանձին գրքերով: «Ագռավաքար», «Քեզ վերեւից չտեսել է նայել»: Նորից... Սարուքա սարի ամպերը: Մուշեղի ամպերի մեջ ի՞նչ հող կա, ի՞նչ հանակ կարոտ: Զմոռանանք շաս բան: Ու հենց այսօր ասենք, որ Մուշեղը նաեւ արքնացնողն ու տարածողն էր մեզանում ֆիդայական, հայրենասիրական շաս ու շաս երգերի: Ոչ միայն անձնական հանդիպումներ, ուրախությունների ժամանակ: Այլ... ռադիոհեռուստատեսության ղեկավար Ստեփան Պողոսյանի ջանքերով բացվում էր այն աղբյուրի բերանը, որ կոչվում է ֆիդայական երգ: Եվ ոչ միայն երգը, այլ նրանց կյանքի պատմություններն էին բացվում ժողովրդի առաջ: Մեծ վաստակ ունի այդտեղ մրմուռ սրտով, թել-թել սիրով, խանձված ծայնով Մուշեղ Գալշոյանը: Քա ասես լիներ Կոմիտասի փնտրած ծայնեղ ծուռը: Ամեն երկրի զավակ իր ծայնն ունի: Սասունցի չկա երգի հոր խմբում ավերմուտ է եղել աշխարհում: Բայց Կոմիտասը հավատում է, որ ծայնեղ ծի ծուռ կճարի: Մարդն էլ սերմ է: Մի ծայնեղ ծուռ ճարի, տասունցի ծուռ, եւ... Մարդն էլ սերմ է, կանաչ աչք է ծփալու, երգի արտ, արտը հորանց է գնալու, արտը ոսկի է դառնալու. Մուշեղն իմն եղավ իր կանչը, իր Ռեոի Թորոսը, իր Սերսեն, իր Ծովասարի Օհանը, իր Պատրանքը, իր Գիկոր Ծաղիկը, իր Միայնակ ծառը, իր Դաշտադահն ու իր Սեղանդարը, այդպես էլ չտեսած իր Մուշ Խաղաի վերին բաղի տղան եղավ, բայց ավելի շաս իր Մամփրե արքան եղավ: Եվ եթե բացատական կերպարներ են երեւում նաեւ, Մուշեղն ավելի լավ գիտեր էլի մենք ենք, մերոնք ենք: Նա արդարության գինվոր էր ամեն հայլափոխի: Երբ սկսվեց ժողովրդի թմբիրային արքնացումը, երբ սկսվեց դարաբաղյան դասումը, երբ հայոց դայարը աշխարհը հավաքեց իր գլխին, երբ աշխարհը քարտեզով սվորեց Հայաստանի եւ Արցախի տեղը, երբ հայ առողջ ու ընդոս սերունդը ոտի ելավ հանուն պատմական ճշմարտության, ինձ այնպես թվաց, թե Մուշեղն առաջին շարքերում է եւ գնում է իր կռիվն անելու: Սիսոս միայն, որ իր բաժին վերջին գնդակը նա շուտ էր արձակել:

Գրողը իր ծննդավայր Կաթնաղբյուրում թողեց հայրենական տունը իր եղբայր Սարգսին, թողեց իր տնկած ծառերը: Նա ճամփորդ էր: Մուշեղի մասին բազմաթիվ հոդվածներ են գրվել, նրան բանաստեղծություններ են նվիրվել: Մուշեղը իր սերնդի սերն էր:

Մուշեղ Գալշոյանը մեզ պահում է իր Մամփրե արքաներով: Հիշենք, որ իր մի շարք Մամփրե արքաների առջեւից, որպես մեր օրերի խտացում, որպես մի Մամփրե արքա գնում է նա: Կապույտ աշխարհի լաճ, խանձված ծայն, հավատի խմոր ու կարոտ ունեցող Մուշեղ Գալշոյանը:

ՀՐԱՉՅԱ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Կապույտ աշխարհի լաճ էր Մուշեղ Գալշոյանը

Մուշեղը... Շաս էր էպոս ու շաս էր պատմություն:

